

„Droschak”
ORGANE
de la Fédération
Révolut. Arménieenne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:

REDACTION DU JOURNAL
„Droschak”
GENÈVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓԱԽԱԿԱԾՆ ԴԱՁՆԵԿՅՈՒԹԵԱՆ” ՕՐԴԱՆ

Պ Ա Տ Ե Բ Ա Զ Մ Ը

Զապաւծ ու եռուն տաելութիւնները վաղուց ի գերելք էին փնտրում — և ահա ժայթքեց բալկանեան հւարախը Աւանդական ոստիի հանդեպ միացան, մի սրտառուչ դաշնակցութեան մէջ, երեկւայ հակոտնեանները, կատարւեց մի հրոշք, որ, թէւ գաժան, արիւնազգեատ ու բնաջնջող՝ բայց գալիս է թեւաւորելու ռամկավարական, սօցիալիստական մի երազ... Արդեօք դարձեալ պատերազմի հին, ճարակող քուրայի մէջ է, որ պիտի դարբնին բաղաքական և սօցիալական արժեկները...

Առ այժմ արիւնն է հոսում վատակներով, զէնքի ժիսրոն է բարձրանում վայրենի և ինացուցիչ, դիմակներն են թաւագլոր ծածկում ընդարձակ տարածութիւններ, պարզելով քաղաքակիրթ աշխարհի առջև բարբարոսութեան մի վիթխարի և նոզկուի տեսարանն

Հեռապատէրը — աւելի ևս աշարկու...

Պատերազմի ծաւալման երկիւղն է, որ պաշարել է արևմտեան գողահար մարդկութեանը Ո՞վ պիտի կանխէ այդ աշխարհաւեր պատուհասը... Ժողովուրդները տակաւին տհաս, անդիտակից, մշակւած միլիտարիզմի ու ազգայնամոլութեան փատիտով, անկարող են առ այժմ զանգւածօրէն թումբ կանգնել գահավիժւող յորձանքի առաջ Արևմուտքում ընկերվարական միլիոնաւոր բանակը դեռ կարող էր յայտնի չափով զապել իշխողների ռազմատեւչ ախորժակները և իրական դվանդագույնի լինել պատերազմի պարագայում: Բայց ի՞նչ անէ ժողովուրդը, ընկերվարութիւնը Ցարի և Ցարանց լոզեֆի կայսրութեան մէջ, ուր պարզամենատարիզմի ու ժողովրդավարութեան ստերը միայն կայ, ուր արտաքին քաղաքականութեան զեկը յանձնւոծ է մի առանձնաշնորհեալ ու գիշատիչ խմբակի, ուր դեռ այնքան երիտասարդ է ընկերվարական, հակամիլիստարական բանակը ևսկ այդ երկու պետութիւնների յարաբերութեան մէջ է պատերազմի ծաւալման վատանգը...

Դիւանագիտութիւնը, որ անկարող եղաւ կանինելու բալկանեան հրդեհը — պիտի կարողանա՞յ առաջն առնել աւելի մեծ կատասրովի, ուսւաւսարիտական պատե-

րազմի... Իսկ սա իր հերթին կարող է բռնկեցնել համաեւրոպական հրդեհը... Կոյր, անհաշիւ տարերայնութեամբ կապիտալիստական ուժիմը ասես մղում է պետութիւններին դէպի խօսկան արկածներ — փոյթ չէ, թէ այդ արիւնում ու ժողովրդաշինչ արկածների մէջ նրանք կարող են վերջ ի վերջոյ գանել իրենց գերեզմանը, բախւել ներքին սօցիալական թշնամուն, որ կարող է նոր, աւելի աղետաւոր ուսմամունաներ շղթայացերծել միլիտարիզմի ու դրամատիրութեան անյագուրդ Մողորի դէմ...

Status quo! — պոռում են նրանք միաբերան, ոմենք պաշտպան ենք Թիւրքիոյ ամբողջութեան, Վաղուց հնչում է այդ յանցաւոր, փարիսեցիական նշանակուցը, բայց ո՞ւր է մնում այդ ուսմբողջութիւնը: Ո՞վ չի խաւտել այն, ո՞ր պետութիւնը չի ծրագրում — մանաւանդ այս վայրկեանիս — Ճանկելու մի չաշ պատառ ոհիւանդ մարդու ժառանգութիւնից... *Status quo* է գոռում բալկանեան պատերազմի հանդեպ հին աղւեսը, Մետերնիսի արժանաւոր կակակատար վիեննական կարինեալը: Բայց դեռ երեկ էր, որ յափշտակեց Քոսնիա-Հերցեգը, բռնաբարելով ոչ միայն ոսմանեան ամբողջութեան գօգմը, այլ և իր ձեռքով ստորագրած բերլինեան դաշնագիրը:

Status quo է աղաղակում և Խալիխան, որ մարսեց արդէն աֆրիկեան Տրիպոլիսը, շղթայազերծելով ներկայալկանեան իրաբանցումը:

”Օսմանեան ամբողջութեան” սին առասպելներով չեն կանգնեցնի՝ ոչ Բուլգարիային, ոչ էլ Անդրիային ու Յուսնաստանին: Ուժն է, որ իրաւունք է ստեղծում այս տարաբախտ աշխարհի մէջ և այսօր կոիւն է միակ օրէնքը Բալկաններում, նա կը ծնէ և նոր իրաւունք ու իրավիճակ: Եթէ բալկանեան դաշնակիցները յաղթող եննեն — հսկայական ու արիւնու զոհաբերութիւնների հոչակատագրօքն, յաղթողները ճանկելու են մի մի պտուա, հետեւելով աւելի մեծ պետութիւնների օրինակին: Արդէն իսկ, ըստ երևոյթին, այդպէս էլ ծրագրած է... Պետերուրդի դաշնիքի մէջ, որը կանգնած է սլավո օրթօգօք դաշնակիցների կռնակին և որը, անտարակոյ, նախագահել է այդ բալկանեան դաշնակցութեան ծնունդին ու որոշումներին: Ո՞վ կըսափէ Անդրիային՝ գուրս

գալ չարաբաստիկ Սանջակից, ուր նա արդէն բռն է դրել պատերազմի օրենքով... Խոկեթէ դուրս չ'երթայ, Աւստրիան է, որ պիտի նետուի կրկէսի մէջ... որովհետև նա չի թող տայ, որ կտրեն իր նւիրական ճանապարհը դեպի Սալօնիկ և Էգեյեան ծով։

Հապա միւս կողմից՝ Ռուսաստանը, ոլով ցեղերի գարաւոր պաշտպանն ու խնամեկալը, չպիտի թոյլ տայ տպահովաբար, որ հարսբուրգեան սոսինը կաշկանդէ սերբերի առաջխաղացութիւնը։ Բօսնիա-Հերցեգի յափշտակումը—սերբ ժողովրդի օրհասական բառաշխիւնի մէջ—արդէն մի եանը հարւած էր և մի անարդանք օրթօգօս ցարիզմին, որ որոշած է, ըստ երեսոյթին, չհանդուրժել այլ ևս նոր ուսնձգութիւններ Աւստրիայի կողմից և մինչեւ իսկ... թերեւս որոշած է վրէժիսնդիր լինել։

Քայլ միմիայն օրթօգօս ցեղակիցներին թիկունք կանգնելու մտահոգութիւնը չէ, որ կը մշէ Ռուսաստանին դեպի արևելեան մարտակրկէս ։ Նա աւելի լայն ծրագիրներ ունի և արդէն տեսնում է հիմնական պատրաստութիւններ։ Թիւրքաց Հայաստան, Դարդանէլ, Պօջիս... Ահա այն հսկայ ու հրապուրիչ պատրանքները, որոնց վրայ բնելուած է Ներկայումս ցարիզմի ուշադրութիւնը, հակառակ Սազօնօվի կեղծ ու պատիր հաւաստիքներին։ Քայլ անդին... Անգլիան կայ, որ մուշածած վայրկենաբար ներապետեան համաձայնութեան սիրասուն զրոյցները, դիտում է Պետերբուրգի ոկուրսը, հսկում է ուսւ կառավարութեան ամեն մի ժեստի վրայ, հասկացնում է բարձրածայն, որ չպիտի թոյլ տայ վերստին չոքելու Թիւրքիոյ կրծքին, իրագործելու ԱՄօն կօվեան վաղեմի ծրագիրները... որովհետև Եթե Բրիտանիան բնաւ չուրդէր և չի թոյլ տայ, որ ուսւական նորակառոյց ու յարաձուն նաւատորմը երեւան դայ Միջնէրկրականի ջրերում, ուր նա կը լինի մշտական սպառնալիք անգիստ շահերի համար։

Ահա թէ որպիտի չարակննիւ հանդոյց է ստեղծւած։ Աչ մի նամնութիւն, ոչ մի իրականներդաշնակութիւն շահերի ու ձգտումների մէջ եւրոպական դիւնագիտութիւնը ըստ առաջնոյն տառապում է Ներքին Խորունկ հակամարտութեամբ... Գրանսիան միգ է թափում միացնելու հակունեաններին, ստեղծելու համերաշխութիւն արևելեան կնճռի շուրջը, բայց նրա ուսւ դաշնակիցը այլ հովերով է տարւած, այլ ծրագիրներ է հետապընդում գերմանիան, որ երկար տարիններից ի վեր ձըդտում էր ամրապնդել Թիւրքիան, վերակազմել կեանք ներշնչել նրա փող օրդանիզմին, ստեղծել հզօր, զինուրական պետութիւն՝ տնտեսապէս շահագործելու և Անգլիոյ դէմ ապագայում իրքէ պատւար ծառայեցնելու համար, —Գերմանիան դուցէ դառն հիասթափութեամբ տեսնում է այսօր իր տաճկական քաղաքականութեան Փիտունիկ օրդանիզմին, ստեղծել հզօր,

թիւրքամոլ միգերի... բանի որ հենց իր դաշնակիցներն են—Աւստրիան, Խոալիան—որ կոպտորէն խախտեցին ոսմանեան ամբողջութիւնը, յափշտակելով իւրաքանչիւրը մի մի հսկայ հողաբաժին և մղելով բալկանեան ժողովուրդները դէպի նոր պատերազմ ու գետի նոր ոյօշոտումները...»

Միութիւն չկայ—չկայ սաւերն իսկ համերաշխութեան անգամ մակեդոնական ու էֆորմների շուրջը Այդ է ամենից սարսափելին դիւնագիտութիւնը, եւրոպական արեօպագը ապրում է այսօր իր ամենախյատառակ անկման վայրկեաններից մինը Անգլիան պարզապէս վերադառնում է լորդ Բիկոնսֆիլդի ժամանակաշրջանին և Խուսաստանի սպառնական ընթացքի հանդէպ պատրաստ է նորէն հրաժարւելու գլազուոնեան աւանդութիւններից։ Խոկ Գրանսիան—որեւմտեան մեծ հանրապետութիւնը—մի շարք գեղեցիկ ժեստեր ու ազդարարութիւններ անելուց յետոյ, պիտի հետեւ դարձեալ մոլորակի պէս իր եանը բարձրուունցք դաշնակցին... Նրա խիզն ևս շատ էլ մաքուր չէ, նա էլ նոր ճանկեց իսլամական Մարոկոն...

Ահա կացութիւնը։ Մի ողբալի և ոճրանիւթքասուն եւ այդ իսկ պատճառով հրդեհը կարող է գրկել ընդարձակ հօրիզոններ։ Զկայ միութիւն ոչ երեքպետեան ու երկպետեան դաշնակցութեան մէջ, ոչ ու եռապետեան համաձայնութեան, հոչակաւոր triple entente. ի մէջ կոլիօվի կառքն է, որ պիտի քաշքչի տարբեր, հակամարտ ուղղութիւններով և ի վերջոյ ճարճամելով պիտի խորատելի Երկիւղ կայ—և նա օր աւուր, գրեթէ ժամ առ ժամ սաստիանում է—թէ Թիւրքիան պիտի ապրի այդ հակառակ ճակատագիրը... Սպառնալիքը ամենից առաջ դալիս է կարծեալ Ռուսաստանից։ Ահա հապշտապ պատրաստութիւններ հայկական սահմանագլուխում, Կոկովցովի Խորհրդաւոր ուղևորութիւն, Ներքին մասնակի զօրաշարժ, ահա լեհերի ապստամբական պատրաստութիւններ՝ մօտալուս փոթորկի նախազգացութեամբ, ահա և ուսւական շօվինիզմի անօրինակ բռնկումներ, ուազմական անսովոր խանդավառութիւն, հազարաւոր կամաւորների, դրամի ու ուազմամթերքի առաքումներ, գետերբուրդից ու Ռուսաստանի այլ կողմերից... Պատմական վայրկեաններ միանդամայն համապատասխանում է և նորածին Դուռման, որ բաղկացած կը լինի իր ահագին մեծամասնութեամբ բիրտ, ուազմամոլ նացիօնալիխուսներից, որոնք խաչակրաց արշանք են քարոզում ի նպաստ բալկանեան սլավոնների։

Ահ, ժեսն-թիւրքական ապիկար նացիօնալիզմը... Նա' է մեծագոյն պատասխանատուն Ներկայ և գալիք աղէտաւոր պատահարների համար Նա' է, այդ բութ ու ամբարտաւան մասնութիւնը, որ չիջաւ երբէք իր յաւակնու ու գրգորիչ բարձունքներից, չլսեց երբէք

բարեկամների յորդորները, չուզեց յարել շխակօրէն բարեն որոգ ման փրկարար բաղաբահանութեան, այլ միշտ միայն ուժ տւեց ատելութեան ու խարութեան ու էֆիմին Որբան մելան թափեց այս չորս տարւայ ընթացքում... Որբան ճիգ ու ճնշում, ազնեսանք ու սպառնալիք, Հայերը առաջին շարբերումն էին այդ միակ ազատարար աշխատանքի մէջ: «Դաշնակցութիւնը» — ի դէմ տառապող հայութեան — գուցէ ամենազգաստ և ամենաեռանդուն քարոզիչն էր այդ բարենորոգչական աւետարանի: Ոչինչ չ'օգնեց: Ազգայնամոլ ամբարտաւանութիւնը չխորտակւեց երիտասարդ թիւրերի մէջ և թւում է թէ երբէք էլ չի խորտակւի: Նրանք ապացին — աւաղ, վերջնականապէս — որ յեղափօխութիւնը կատարել էին ոչ բնաւ լիբերալիզմի ու իրական ազատութեան մտահագութիւններով, այլ յեղափօխութիւնը նրանք դիտել էին սոսկ իրեւ միջոց — վերջին միջոցը — փրկելու թիւրքիան նոր անդամահատումից: Ահա իսկական պատճառը չըրսամեայ բոլոր ազէտների և այսօրւան գահավէժի... .

ՄԻՇՏ ԴԵՊԻ ՅԵՍ

Վայ օտարացեղ ազգերին... ո հոկտեմբերեան դուման այժմ արդէն դարձաւ կատարելապէս սև-հարիւրակեան, ոպուրիչելիքիչեան: Նա եղաւ պ ո պ ե ր ի պարլամենտ... Պօպը, կղերը առհասարակ ուժեղ գործոն չէ հասարակական առաջադիմութեան ձանապարհի վրայ, իսկ ոռու պօպը իր մի շարք բարեմանութիւններով — ուղղակի առապելական է: Նա նոյն մուժիկն է, նոյն անսահման տգիտութեան ու անշարժութեան նմուշը, — միայն տւելի գիշատիչ և աւելի ստորաբարշ ու տիրապաշտ:

Մակարօվեան կուրսը՝ տւեց ուրեմն իր հետապնդած արդիւնքը: Կղերի անօրինակ, պատմութեան մէջ չտեսնեած, ընտրողական զօրաշարժը հասաւ իր նպատակին դուման: Կը լցուի եկեղեցականներով, պօպերով: Նա մինչև օրս էլ ոչնչութիւն էր օրէնսդրական աշխատանքի տեսակէտից — այսուհեաւ կը դառնայ մի ճշմարիտ աղօթարան... Օրէնսդրական, բարենորոգչական աշխատանքի տեղ պիտի տեսնենք ամեն օր աղօթքի ու գետանտարած երկրպագութեան արարողութիւններ, պիտի տեսնենք շարունակ խունի ծուխը բարձրանալիս դէպի երկինք և դէպի գահ: Եւ ինչո՞ւ չպէտք է ծխէ այդ խունկը ինչո՞ւ պէտք է դժգոհ լինի կղերը... Նա կարող է բարգաւաճել միայն ներկայ կարգերի մէջ: Նա իր ամբողջ դաստիարագային էութեամբ համերաշխ է ժողովրդին ստրկացնող թալանչների և ամեն տեսակ ազրուկների հետ: Նա իր մի շարք ներկայացուցիչներով — եպիսկոպոսներով ու տէրտէրներով — արդէն երրորդ դումայի մէջ՝ միշտ պաշտպան էր բռնապետու-

թեան և առանձնաշնորհեալ դաստիարագերի, միշտ կատաղի հակառակորդ առաջադիմական տարրերի: Այսուհեաւ — աւելի բազմաթիւ և աւելի յաղթական: Այսուհեաւ նա լիակատար պատրաստականութեամբ ընդառաջ կերթայ կառավարութեան բոլոր յետադէմ ծրագիլներին, «այո՞ւ կ'առէ նրա բոլոր պահանջներին: Զեն լինի անգամ այն թոյլ, ողորմելի ոը մբոստացումները», որ մերթ ընդ մերթ այս կամ այն առթիւ ցոյց էր տալիս երրորդ Դումայի մեծամասնութիւնը:

Աւելի լաւ կացութիւն գուցե չէր կարող երազեց պետերբուրգի կամարիլլան: Կոհիոլայ լի կարող է վերջապէս գոհունակութեամբ չին ձեռքերը և ա դժգոհ էր նախկին Դումայից: «Ցունիսան օրէնքը» իր կոպիտ յօշոտումներով տւեց, վերջապէս, բաղձալիին: Ուստատանը այսուհեաւ կունենայ նիսկական ներկայացուցչութիւնն, եզակի, աննախննթաց՝ լուսաւոր ժողովուրդների տարեգրութեան մէջ: Նա թիկունք կը լինի մի յանցաւոր ու օլիգարշիկ փոքրամասնութեան, թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան ծանրակշիռ խնդիրներում Եւ պօպերի սև լէգեննը միացած օտարակեր, նացիօնալիստ գոհմակների հետ՝ կը հնչեցնեն ի լուր ամբողջ աշխարհի, թէ իրենք բառբառում են յանուն ու յօդուա մուսասանի ժողովրդի... .

Եւ այդ գիրախա, անիծակուու երկիրը կը շարունակէ համարել ոսահմանադրականն:

Վայ այն փոքրիկ նւաճումներին, որ մնում են 19⁰⁵ թի օրերից: Վայ մանաւանդ ոկրայիններինն, ոչուու ժողովուրդներին: Համ արդէն նախանձելի չէ նրանց ազգային ինքնօրինութեան վիճակը, այսուհեաւ, աւելի թափով առաջ կ'երթայ մկրտաման ու ուսւացման պրօցեսը — մինչև... ո՞վ գիտէ երբ...

* *

Միշտ դէպի յետ... Ասես նզովեալ ձակատագիրը դատապարտել է այդ ահագին կայսրութիւնը, այդ ահագին ժողովուրդը՝ քարշ տալու միշտ հին, անյիշատակ օրերում դարբնած շղթաները: Ասես նրան վիճակւած չէ կուելու պատմութեան համար... Մերեժկօվկուց և ուրիշներից յետոյ՝ այժմ Մաք և ի մ Գ օ ր կ ի ն է — Յեղափօխութեան մրրկահաւին խանդապառ երկիչը — որ պաշարել է նոյն պեսսիմիստ խոհերով: Կարդացէք նրա նամակը, գրւած անծանօթ հասցէին, ուղղած ոտարածութեան: Ապա նայեցէք ուսւ յեղափօխական հրապարակին, այդ սոսկալի ցրւածութեան, այդ տիսուր անօգնականութեան ու պառակտան: Եւ, ստկայն, մեծ կուներ — բուն, մասսային յեղափոխ կայսերի համար առ կուներ — դեռ չ'եղան

Ուսւ յեղափօխականները, սօցիալիստները ըստ առաջնույն կոչ են անում էւլուպայի հասարակական կարծիքին: Ս.-ր.-ների ո Տրիբուն ռուսս «-ը ահա վերստին

Հրատարակւում է, երկու տարւայ լոռութիւնից յետուր Թուրանօվիչ և ուրիշներ խիստ շահեկան յօդւածներով ամփոփում են Թուրանատանի ժաղովրդական կեանքի առերները, կառավարչութկան անդուր հայածանքներն ու անգթութիւնները, պարզում են և յեղափոխական բանակների հաւատոյ հանգանակը, Վլագիմիր Բուրցեվ, անխոնջ պրոպագանդիստը, իր „Avenir“ թերթի մէջ — ֆրանսերէն և ռուսերէն — կատարում է մի ուշագրաւ ուեղեկատու՝ աշխատանք, մերկացնում է եւրոպական հասարակութեան առջև ռուս ու էժիմի և նրա զեկավար անհամերի դժոխային պատկերը, հրապարակում է յաճախ ցնցող իրողութիւններ, բաղելով դաշտնի ու արժանահաւատ աղբիւրներից... Աչա սիրիիքան բանապետեալների մարտիրոսագրութեան աղեխարշ էջեր, որ ժարակում են ձեր խիդմք, աչա լէնայի կատաստրօֆը, մի յուզիչ նկարով, որ պատկերացնում է բանուրական կոտորածի ամբողջ տեսարանը, հարիւրաւոր աշխատաշ ւորների խառն ի խուռն դիսկները, փուած մի անդողորմ ու դիւային ուժի հրամանով:

Այդ բոլորը զարհութիւն է, արտաւեցնող է, բայց... այլ ևս չի ազդում՝ անգամ նրազգաց եւրոպացու վրայ՝ նրա ջղերն ևս կարծրացել են ի տես այդ անեայր, յաւերժորէն կրկնող անգթութիւնների ու սարսափների նա կարծես ձանձրացել էլ է գիմումներից և արդէն այդ յաճախակի ու յուսահատ դիմումները եւրոպային՝ մի տիսուր վկայութիւն են յեղափոխական ուժիքի ներքին տկարութեան.. Երաւացի է Մաքսիմ Գորկին Վաղուց պիտի գրէր նա այդպիսի յօդւածները Վաղուց և աւելի ուժով պիտի խարանէր յեղափոխականների, սօցիալիստների կորստարեր պայքարները, նրանց տենդային իրարաջնջումը՝ ընդհանուր ու յաղթական թշնամու հանդեպ, նրանց եղակի թէօրիհամոլութիւնը և գործնական ոգու արտաւելի պակասը Բայց նա ինքն ևս, տարաբախտաբար, մինչև օրս համակւած էր սօցիալդեմոկրատին իդէօգիտայով, նա ինքն ևս շղթայւածի պէս էր, և այժմ կարծես ազատագրելու վրայ է.. Իբրև խելացի, ողջամիտ ռուս, տեմպերամենտով յեղափոխական՝ գորկին չէր կարող չնշմարել այն անհամար չարիքները, որ բղխում են ազատագրական գործի համար այդ նողկալի ու յաւիտենական երկառակութիւններից և աչա սկսած է իր ուժերի չափ հակազդել նոյն ուղղութեամբ աշխատում են ս.ր.ները և Բուրցեվ նինընօգնութեան՝ մէջ է փրկութիւնը և ինքնօգնութեան դաւանանքը պիտի շեշտուի յեղափոխական տարբեր հատածների լիակատար համերաշխութեան մէջ բաժանւելու տեղ՝ պէտք է միանան ժառ ժոռէսը տեսնում է տրդէն մխիթարական նշաններ: Նա շեշտում է գոհունակութեամբ, որ Թուրանօվիչի ու նեշեսունի հետ՝ նոյն պարիզեան „Tribune russe“-ին աշխատակցում է սօցիալդեմոկրատ Մարտով... (Դեռ

ինդիր է, թէ որչափ տեսկան կը լինի այդ աշխատակցութիւնը): Այնքան գէշ օրինակներ են աւել մինչև օրս ուսւ սօցիալիստ հատածները իրենց ներքին երկպառակութեամբ, որ մնում է Ժուկովի հետ մխիթարւել և ալդրան քչով...

Ո Պ Ի Ս Ա Կ Ա Ն Զ Ն Դ Ա Ն Ն Ե Բ Ո Ւ Խ

Լուսումարի ողբերգութիւնը

Մի նոր ու բատմելի եղեռնագործութիւն Սիրիի մէջ. Նման Ակատույի և Զերենտույի գաղանութիւններին, որոնց ընթացքում ինքնասպան եղաւ Պէտքէյի տերօրիս Սազօնօվ:

Կլիատուր բանտարին կառավարիչ Սեմենտօվսկի գալիս է կուտօմարի բանտը և շրջելով բոլոր խուցերը, սկսում է ոգու՝ ով խօսել բաղաքական յանցաւորների հետ Պատասխան չստանալով իր հարցումներին, նա եռում է կատաղութեամբ և հրամայում է դնել նրանց բրէտկան յանցաւորների հետ հաւասար ուժիմի տակ, այսինքն ենթարկել այն բոլոր ստորացումներին, որոնց ենթակայ են բրէտականները:

Մի մի առանձին խուցի մէջ փակւած բաղաքական երկու բանտարկեալ, Մօշկին և Միխայլօվ, ասում են բանտարին կառավարչին. Մենք ոգու՝ ով խօսողին չենք պատասխանում: Իսկ Բրիլիէն ասում է. ոգուր, պարոն, նախ սովորեցէք բաղաքավարութիւն և ապա հարց ու փորձ արէք:

Սեմինտօվսկի հրամայում է փոխադրել Բրիլիէնին կանդալների բաժանմունքը Բրիլիէն կոչում է Սեմինտօվսկուն ոգուրչելի՝, Բանտարին կառավարչապեսը հեռանում է: Եւ մի բանի օրից յետոյ պատիմը վրայ է հասնում: Մտնում են վոհմակով յիշեալ բանտարկեալների մօտ և սկսում են սոսկալի ծեծ: Կախ ծեծում են Բրիլիէնին. Հարեւան խուցերի մէջ բարձրանում է անասելի ժխոր Մօշկին և Միխայլօվ գիշերը թոյն են ընդունում. Թոյնը փացած էր, տանջաները սոսկալի էին: Բժշկական օգնութիւն հասաւ Մօշկին լաւացաւ, Միխայլօվ խելագարւեց: Թոյնը ընդունեցին նաև Բիշկով, Էլյարազօն, Մալով, Չերտամով, Օդինցօվ, Աօզլով: Դարձեալ թոյնը ահուելի անջաները պատճառեց, բայց ոչ մահ: Այն ժամանակ երեք հոգի, Բիշկով, Էլյարազօն և Մալով բաց արին իրենց երակները և մեռան: Հետեւեալ օրը դուխալսկի ևս թոյնը ընդունեց և մեռաւ...

*

Այդ գոհունային ողբերգութեան մանրամասները հասան Պարիզ, Բուրցերին, և յարուցին բողոքի ու ցասման սովորական տեսարաններ հրապարակային ժողովների մէջ.. Ցարաբախտաբար, անդօր, ապարդիւն: Թու-

սական կառավարութիւնը ոչնչացնում է ամենաանգութ ձևով, իսկ դրա հանդեպ լսուում են միայն յեղափոխական բայրայւած բանակի անոյժ յօխորտանքները...

Այդ զարհուրելի իրողութեան գիտակցութիւնը թունդ հանեց Մաքսիմ Գորկի ին, որ ահա հրատարակում է Բուրցեվի օրգանում մի թունոտ մեղադրական ուուս անկամ ու ողբալի հասարակութեան դէմ, յեղափոխական պառակտուն բանակի դէմ, ամբողջ Ռուսաստանի դէմ, որ լոելեայն հանդուրժում է ամեն տեսակ հարւածներ ու անարդանքներ:

*

Խճ հարցնում են.

— Ինչո՞ւ չէք դրում Կուտօմարի բանտարին անցքերի մասին:

Մի բանի անգամ գրիչ առի Զեռքս դողում է կատաղութիւնից և ցած իջնում, ուժասպառուած ցաւագին հարցից.

— Ո՞ւմ գրել Ո՞ւմ Ով պիտի լսէ բարկութեան ձայնը, ո՞ւմ սիրտ կը յուզէ և ի գործ կը մշէ մարդկանց չարչարանքների ու մահւան պատմւածքը — մարդկանց, որոնք գերի են ընկել բարբարոսների ձեռքը և որոնք թշնամուն յաղթելուց յետոյ հիւանդացել են մի սարսափելի ցաւով — յաղթողների սադիզմով:

Ապագայ՝ թերթի մէջ ապագրած նամակում հեղինակը գուշում է.

— Տեղեկացրէ՛ք գէթ հասարակութիւնը, թէ ինչեր են կատարում մեզ մօտ:

Առաջ հասարակութիւնը...

Ես հաւատացած եմ, որ ամեն մի ձայն այդ ուղղութեամբ արձակւած, անխուսափելիօրէն պիտի կորչի գատարկութեան մէջ:

Միթէ՛ Ռուսաստանում կայ հասարակութիւն, այսինքն բաղաբակիրթ մի կօլլեկտիվ, հիմնած ամրապէս իր իսկ մշակած իրաւունքի աւանդութիւնների վրայ, օժաւած սեփական արժանապատութեան զգացումով, իր բաղաբական իրաւունքների պարզ գիտակցութեամբ — մի կօլլեկտիվ որ ընդունակ լինէր գործօն կերպով բողոքելու ընդդէմ ամեն բռնութեան, որ գործադրում է Ռուսաստանում մարդու և բոլոր ժողովուրդների վրայ:

Եթէ այդպիսի հասարակութիւն գոյութիւն ունենար, միթէ՛ նա թոյլ կը տար տակն ու վրայ անել իր ամենահին համալսարանը, տարածող բաղաբակիրթութեան, որ այնքան անհրաժեշտ է թշւառ ու խաւար երկրին:

Միթէ՛ նա թոյլ կը տար իր կառավարութեան՝ առաջ տանել ուուսացման՝ այն վայրենի աշխատանքը, որը միշտ աւելի և աւելի վիրաւորելով կայսրութեան հպատակ ժողովուրդների ազգային արժանապատութիւնը, միշտ աւելի բորբոքում է նրանց մէջ ազգայնամոլ շօվինիզմը ընդդէմ ու տիրական՝ ցեղի, ստեղծելով վերջնի շուրջ թշնամիների մի սերտ օղակ:

Միթէ՛ բաղաբակիրթ հասարակութիւնը թոյլ կը տար իր կառավարութեան՝ առաջ տանել այն պարտաքին բաղաբականութիւնը՝, որ կրկին սպառնում է Մուկդէններ ու Յուսիմաններ բերել Ռուսաստանի զլիին:

Թոյլ կը տա՞ր նա առաջ բողոքելու, զիմագրելու, որ կոտորեն երիտասարդ ուժերը, որ սեփական զաւակները բռնւին ինքնապանութեանց համաձարակով, որով թերեւ հնձւում է, խլւում է կեանքից հասարակականօրէն ամեղգայուն և ամենաազնիւ երիտասարդութիւնը:

Թոյլ կը տա՞ր նա չւանով գերի տանել ինքինքը պապերի (Քահանաների) ձեռքով, որոնց կառավարութիւնը կուզէ յանձնել երկրի սօցիալական և բաղաբական շահերի պաշտպանութիւնը:

Հնարաւո՞ր է արդեօք բաղաբակիրթ հասարակութիւնը, երբ նրա ամբողջ վարչական կազմը բազկացած է միմիայն գողերից, ցինիկներից, պրօվօկատորներից ու անտաղանդ մարդկանցից, ինչպէս որ այդ տեսնում ենք Ռուսաստանում:

Ոչ մեզ մօտ չկայ նոյնիսկ մի այնպիսի հասարակութիւն, որ ընդունակ լինէր գէթ իր ոսեփական կաշին պահպանել, և ու ուրեմն դիմել ուուս հասարակութեան, ասել է պոռալ դատարկութեան մէջ:

Ով ինքինքը չի կարող պաշտպանել — ընդունակ կը լինի՞ պաշտպանելու իրեն համար օտար մարդկանց:

Օսաբար — այդ պէտք է լու յիշել!

*

Դիմել արդեօք Եւրոպայի հասարակական կարծիքին, մի անգամ ևս ցոյց տալ նրան ուուս կառավարութեան գաղանութիւնը և յորդորել, որ բողոքէ:

Այդպէս արւել է, բողոքներ եղել են և գարձառ անապատի մէջ:

Քայց այնուամենայնիւ — պէտք է անել նորէն, համաշխարհային կուլտուրայի շահն այդպէս կը պահանջէ, որ ջնջւին, ոչնչանան գաղանութեան, խայտառակութեան և ամեն տեսակ անարգանքի օճախները, ինչպէս որ կ'ոչնչացնեն ժանտախտի օճախները:

Անհրաժեշտ է, որ Եւրոպան գիտնայ, որ իր սահմանակից, քով քովի պայում են մարդիկ այնպիսի պայմաններում, որոնք այլասեռում են միտքն ու կամքը և որ այդ մարդիկ կարող են փոխադրել իրենց հիւանդութիւնները Եւրոպացու համեմատաբար աւելի բարեկարգ, աւելի առողջ կեանքի մէջ:

... Եւրոպական մտաւորականութիւնը պէտք է հասկանայ, որ եթէ իր սահմանակից երկրի մէջ ամեն օր կատարում են արիւուտ դրամաներ, մարդկանց ցինիկ չարչարումներ, բռնութիւններ և անասնութեան ու գաղանութեան ամեն տեսակ անարգանքի օճախները, որ նա կարող է վարակւել իրենից մօտ ստեղծւած ցաւի,

արեան, չարութեան և տանջանքի մթնոլորտից... Մի կողմը թողնենք մարդասիրութիւն, համերաշխութեան զգացում ևայլ նման բաներ, համաձայնւինք, որ դրանք բոլորը ոռօմանտիկ « է, խօսենք իրականի, ակներեկ մոսին... »

Բայց քանի որ, այդպիսի բողոքներ ոռւսական անցքերի առթիւ եղել են արդէն և հնչել են անապատի մէջ, առանց որևէ բան փոխելու ոռւս կեանքի մէջ, ապա հնարաւոր է, որ եւրոպացին ասէ ինքն իրեն.

— Այդ երկիրը պարզապէս անուղղելի է, նա մինչեւ ուղուծուծ վարակւած է բարոյական փտութեան ծանր ախտով, նրան սպառնում է սօցիալական և ցեղային ու քաղաքական կործանում։

Եւ դիտելով Ոռւսաստանը, իբրև հոգեկան ժանտախտի օճախ, Եւրոպան պարզապէս միջոցներ ձեռք կ'առնէ, որպէս զի ինքը չվարակւի... Նա կը ջնջէ Ոռւսաստանը կենդանի և ապրելու ընդունակ երկիրների ցանկից, կը նայէ նրա վրայ, որպէս մի դատարկ երկր՝ որ չի կարող քաղաքակրթւիլ իր մէջ բնակող մարդկանց ճիգերով, ուստի և պէտք է նւաճիւ և բաժանւի այնպիսի մարդկանց մէջ, որոնք ընդունակ են կեանքի և աշխատանքի։

Պէտք է յիշել որ եւրոպացին այնուամենայնիւ մեղ համար օտար է և նոյնիսկ շատ ինտելիգենտ եւրոպացիներ յաճախ ասում են, որ ոռւսների տեղը Ասիոյ մէջ է, որ նրանք ոթիւրիմացութեամբ « են գտնուած եւրոպական ցամաքի վրայ և որ այդ հոգերը նրանց ձեռքում չեն կարող տալ այն ինչ որ կը տային ուրիշ մարդկանց ձեռքում։

Իբրև ազգ, մենք տակաւին ոչ մի բարիք չենք արել Եւրոպայի համար, իսկ չարիք պատճառել ենք ոչ սակաւ Յիշենք Եկատերինայի և Պավիլի կոիւը Ֆրանսիական Յեղափոխութեան դէմ, Անդարիայի ապստամբութեան Ճնշումը Նիկոլայ, Լի զօրքերի ձեռքով, յիշենք ոռւս ցարերի ամբողջ քաղաքականութիւնը XIX դարում. Նա ձգտել է կաշկանդել արևմտեան Եւրոպայում ազատութեան ու արդարութեան սկզբունքները, քաղաքակըրթութեան սկզբունքները։

Իտալիայի ազատ քաղաքները պարգևել են անմահ արեւստն ու հումանիզմը, անդլիացիք մշակել են պարլամենտարիզմի գաղափարը, ֆրանսիացիք կատարել են Մեծ Յեղափոխութիւնը, որ մլել է ամբողջ աշխարհը դէպի կոիւ յանուն մարդկային իրաւունքների, գերմանացիք կազմակերպել են սօցիալիստական անպարտելի կուսակցութիւնը, — ոռւսները գեռ չեն արած այդքան մեծ երախտիքներ համաշխարհային քաղաքակրթութեան։

Եւ մենք չպիտի յուսանք Եւրոպայի աջակցութեան վրայ Ոռւսաստանի քաղաքական ազատագրումի համար նաև այն պատճառով՝ որ Եւրոպական կապիտալի շահերին ու դիտարութիւններին աւելի հաճելի ու պէտ-

քական է թոյլ երկիրը, ներքուստ պառակտւած և ուղղւած դէպի քայլայումն։

*

Ճշմարտապէս կուլտուրական մտաւորականութիւնը Ոռւսաստանի մէջ պէտք է լինի յեղափոխական և պէտք է յոյշը դնէ միմիայն իր վրայ, իր ուժերի վրայ, ընկերային համերաշխութեան վրայ — համերաշխութիւն՝ կուելու համար հին թշնամու դէմ, որին անհրաժեշտ է տապալել։ Այսպէս կը պահանջէ Ոռւսաստանի բոլոր ցեղերի շահը, այսպէս կը պահանջեն և համաշխարհային կուլտուրայի շահերը։

Թող այն փետուրները, որ ռէակցիան պոկել է Յեղափոխութեան թեկերից, գրեն իրենց մեղաները, թող նրանք զբաղւեն սխալների վերստուգութեամբ, ինքնաքննադատութեամբ և ինքնաթունաւորման այլ ձևերով — առողջ մասը կենդանի մարդկանց պէտք է շարժման մէջ դնէ իր ուժերը։

Ոչ ոք չի օգնի մեզ, եթէ ինքներս մեզ չ'օգնենք։

Պէտք չէ մուանանք, որ ոռւսական պատմութեան ամբողջ տարածութեան վրայ՝ ստեղծագործող գեր կատարել է նրա մէջ յեղափոխական մտաւորականութիւնը. Նա է տարել Ոռւսաստանը դէպի Եւրոպա, նրա ուժերով է երկիրը սնւել հոգեպէս։

Ոռւսաստանում միմիայն յեղափոխական ինտելիգենցիան է, որ ունի ճշմարիտ կուլտուրական աւանդութիւններ — և այդ աւանդութիւնները յիշելով՝ նա կը վերածնւի նոր ուժերով նոր կուի համար։

Բռնապետութեան կարթագենը պէտք է կործանւի

ՄԱՀՍԻՄ ԳՈՐԿԻ

Կ Ե Ն Ս Ս Գ Ի Ս Ա Կ Ա Ռ Ի

Ս Ս Ր Ր Ա Զ Խ Է Հ Տ Հ Օ

Մեր լաւագոյն ձիւառներից էր, որ մասնակցել է « Դաշնակցութեան » բազմաթիւ կոիւներին, Կովկաս, Թիւրքիա, Պարսկաստան, Վահենապարտաճանաչ և ամենասիրւած ընկերներից մինը։

Ըարիւր-Դարալագեազցի էր, նշանաւոր ռազմիկ-տէրուտէրի (Տէր Գրիգորի) բրոջ տղան իր լեռնոտ երկրի զաւակն էր. մի քանի տարի իրու ստրաժնիկ ծառայելով, դարձել էր վարժ ձիւառը և հմուտ կուողը։


1896-ին իմանալով, որ « Դաշնակցութիւնը » Պարսկաստանի մէջ պատրաստութիւն է տեսնում դէպի ներկիր « արշաւելու համար, Խեչն փախչում է զինւորութիւնից և մի քանի դարալագեազցի երիտասարդների հետ անցնում է Պարսկաստան։

Մասնակցեց 1897-ի արշաւանքին ձիւառը խմբի մէջ, իրք լաւագոյն կուողներից մինը։

Մահլամ գիւղի ողբերգական դէպքից յետոյ նա մէջն եղաւ վըէժխնդիր տերրօրիսաներից, որոնք մահով պատժեցին Մահլամի հայ մատնիչներին:

1899-ին Ռուսաստան է Ռոտիկանութեան ձեռքն է ընկնում և պատժում, իբրև փախստական, «դասալիք», երկու տարի զինւորական ծառայութեան մէջ մնալուց յետոյ, նորէն ուղևորւեց դէպի Սալմաստ: Այսուհետեւ նա աչքի է ընկնում իբրև ընդունակ գործիչ: մի այլ կարեռ ասպարէզում, զէնքի դժւարին փոխար ադրութեան մէջ:

1904-ին, երբ Սասունը և Մշոյ գաշտը բռնւել էին շարժման հրդեհով, և երբ Կովկասից զրկուում էին օգնութեան ռազմիկ խմբեր, Խէջօն դարձեալ հրամարակի վրայ էր, իբրև անխոնջ և անձնւեր զինւոր, առաջարկում է իր կեանքը հայրենիքի համար:



Ս ա ր բ ա զ լ է է չ օ

Դումանը ընդունեց նրան, իբրև յետնապահ, իր ձիաւոր խմբի մէջ, որ երկու օրւայ ճամբայ անցնելով, վասպուրականում, կռւի բռնւեց բիւրդերի հետ:

Ապա Սալմաստում շարունակեց Սամսօնի հետ իր գործակցութիւնը, նորէն զբաղւեց զէնքի փոխադրութեամբ:

Թուրք-հայկական ընդհարութեան միջոցին Սարբազ Խէջօն կովկաս է, կռւում է առաջապահ շարբերի մէջ իր ծննդավայր-գաւառում:

Կազմակերպութեան մէջ վրայ է հասնում մի նոր ոկրիզ, մի հրանական շանտաժիսաների ըմբոստացումը Խէջօն այդտեղ ևս ինքնինքը տրամադրելի է անում կազմակերպութեան: Մի հրանականութեան դէմ սկսւած խուճապի ընթացքում, մեր սիրելի ընկերը նորէն ընկնում է ուսւ ոստիկանութեան ճանկը, այս անդամ այլ ևս առանց վերադրձի...

Զերբակալւեց Նօվորօսսիյսկում 1907-ի օգոստոսին: Մի երկու ամիս այդ քաղաքում բանապարկեալ մնալուց յետոյ, փոխադրուեց Եկատերինոսոգարի բանտը: Մի հրտակ ցուցունքով՝ դառնում է ծանր քաղաքական յանցաւոր, մեղադրում է տերը օրի մէջ նրան պահում են միշտ շղթայած:

Բերում են դրանից յետոյ Նօվոչերկասսկի դժոխվը: Երեք ու կես տարի բանտէ-բանտ քաշքաշելով մեր խեղճ ընկերը իսպառ հիւծում է, վարակում տիֆով և վախճանում (36 տարեկան հասակում):

Խոր կոկիծ յարուցեց այդ մահը ընկերների մէջ և բուռն զջւանք դէպի դաշիճ բռնապետութիւնը, որ մի քանի տարի շարունակ իր դժոխային խուցերի մէջ չարչարեց ու մաշեց այնքան թանկագին երիտասարդ կեանքեր... Իր ցուրտ ու կորած գերեզմանից՝ Խէջօն, մեր հեղիկ և ազնիւ Խէջօն, վրէժ է գոչում տմարդի և ցինիկ Լըիժինների դէմ..

ԴԱՅ — ԿԱՆ ԽԷՋՕ

ՆԻԿՈԼ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ *

Դեռ վառ է երեակայութեանս մէջ այն մեղմ ու համակրելի դէմը, որ այնպէս աչքի էր ընկնում մեր զինւորական շարքերի մէջ:

Նիկոլը...

Մերթ հողագործ, մերթ հիւսն, ապա տերրօրիստ և վերջը պատերազմի գաշտում զինւորի եւ ամեն տեղ նոյնը, միշտ բարի ու միշտ սիրելի:

Ծնւել է Ղարաբաղի Վարանդա գաւառի աշան գիւղում, 1883 թիւն:

Ղարաբաղը — այդ որրանը բազմաթիւ հերոս-զինւորների, որոնցից մի բանիսը պարծանըն են եղել ամբողջ կովկասի:

Առվորել է Աշանի դպրոցում և ինքնազարդացմանը բաւական առաջ էր գնացել:

Նրա որոնող և դէպի բարձրը սլացող հոգին դուրս է նետում գիւղական նեղ շրջանից և տարւում Բագրի քառային մթնոլորտը, ուսկից շատ քչերն են ազատում բարոյապէս:

1902-ից անդամ է «Դաշնակցութեան» բագրի խըժքերից մէկի, ապա հայ-թիւրքական ընդհարութեան դուրս է գալիս կռւելու թիւրք խուժանի դէմ, մի քիչ վերջը ձերբակալում և փախչում է Վլատիկավկազ, ուր նորից մտնելով կազմակերպութեան մէջ, գործում է տերրօրիստական փշոտ ճանապարհի վրայ և ամենաճարպիկն է լինում՝ զէնքեր փոխադրելու դժւարին գործի մէջ:

*) Տես Նկարը դրոշակ՝ № 5.

1906ին, երբ արդէն խաղաղւել էր մթնոլորտը և յուել խօսւական բազինումների որոտը, նիկօլն անցնում է զարարագ՝ նպաստելու համար ինքնապաշտպանական կազմակերպութեան և գիւղացիական պրօպագանգին։ Նորից մարտական շեփորտմներ այս անգամ արդէն ոլորսէ աստանի մէջ..

Եւ նու այնտեղ էր, այս անգամ արդէն խմբապետի դերում նու մասնակցում է բոլոր կոհւներին՝ Մազանդարան, Համատան, Քիրմանշահ և այդ վայրերի հետ կապւած ժողովրդական յաղթանակի փառքը յաւերացնում է նրա յիշատակը.

Վերջը...

Մայիս 6-ին, ժամի 4-ին, Շուրիջայի մեծ յաղթանակից յետոյ, զաւշ թափէում ընկաւ նիկօլը։

Անգիտակից ու գուեհիկ խաժամուժից արձակւած մի գնդակ խլեց մեղնից մի զինւոր, որ այնքան թանկ էր մեզ՝ թէ իբրև կուող և թէ իբրև մաքուր յեղափոխական։

Ընկաւ նա անյաղթներից անյաղթ՝ Եփրեմի կողքին միշտ հաւատարիմ ու միշտ անսահանջ։

Հանգի՞ստ տանջւած ոսկորներիդ, անմոռանալի ընկերութեամուսում կազմակերպութեամուսում առաջական գուէզէ։

Ա. Ե. Յ Ե Ա. Լ. Ի Ռ Ա. Բ Ռ Ա. Վ Ի Ռ Ա. Մ

ՎԱՐԴԱՆԻ ՑԻՇԱՏԱԿՈՐԱՆԻ

III

Քիւրդի նոգեանու թիւնը նայ առաջին մէղայիների ճանդէպ. — Քարոզչական պատոյք. — Խելի Սոկո — Մի աւօգտա տիպ. — Հայտակ իր դըկի — Հայ պրօպագանիոսիք մողովդի մէջ. — Արևածանի ուղիւութիւն. — Խուզ. — Խուզ. — Թօ՛յ. թօ՛յ. — Քարամանակի դէպիր. — Խելու և. Մահենօին. — Յօզպ. յօզպ. յօզպ. — Յօզպ. յօզպ. — Նորէն կր իւ. — Ամոն անդ. յիւրդ. — Վանայ լին էգլուսի պատում. — Պատում իւ իր ընկերներ. — Խելի Աղրամար. — Առաջին նայ ուղիւութիւնը Աղրամարայ վանի մէջ. — Վերապարձ. — Ժողովներ Այլուսանում. — Մօսալու քարդի ուրւականը և ինքնապատպանութեան նոզոր. — Հազար դէպի թաւէդի Համերաշուր թիւն դամականականների և արևմանականների միջւ. — 60 նորոյ զինած խումքը Պար կաստանից դէպի Վան. — Արևածանե՛ր, արկածնե՛ր. — Քիւրդի և բնորիւնը նայ ռազմիկի դէմ. — Քարձեալ ընդհարումներ և կրիներ։

—

Հետեւեալ օրը — մի նոր անակնալ Գիւղից եկան երկու թիւրդ երիտասարդներ՝ սակեցի հայդուկի հետ աեսազեցիու Վերջինս ընդունում է գրանց ու նստում աղբիւրի մօտ զրուցեցու Մենք մնում ենք հեռու թագնւած։ Սաստիկ ծարաւում ենք ճաշից յետոյ, բայց չենք կարողանում աղմիւրի մօտ գնալ, բրդերը այնտեղ էին։ Հայդուկներից մի քանիսը այնուամենայիւ չամբերեցին և մէկիկ-մէկիկ գնացին դէպի աղբիւրը Քրդերը նրանց աեսներով, մասցել էին շշմւած. զարմանում էին հայերի մէջ այդպիսի մասդիկ տեսնելով։ Մենք ևս ի վերջոյ որոշեցինք հանդէս գալ. ծարաւը տանջում էր Գնա-

ցինք, բարեկեցինք Քրդերին ու ջուր խմելով նստանք մօտերնին նրանց աչքը մեղանից չէր հեռանում Ասից գլուխ չափում էին մեզ. և նրանց ուշագրութեան գլուխաւոր առարկան մեր զէնքերն էին Աւելի մեծացաւ նրանց զարմանքը, երբ ցոյց աւինք նոր ձեմի հրացանները, նրանց առաւելութիւնները, անծուխ լինելը և լուսակը տւեցինք նրանց ձեռքը սկսան նայել դէպի հեռու կէտերու դաշ արդէն ապացեցրեց նրանց և հիացմունքով բացականչեցին. ուսխպէր, ձեզ հետ գլուխ հանելը շատ դժւար է»։

Քրդերը սակեցի հայդուկի համար երկու զոյդ գուլպայ էին բերել, իբրև նւէր. խնդրեցին, որ թոյլ տանք գնան մեզ համար ոչխար բերելու և այլ պաշար Չընդունեցինք ու շնորհակալութիւն յայտնեցինք։

Այդտեղից մենք կուզէինք Ռշ շուն և նիք անցնել ուղղակի Բայց մեր խմբի մէջ գտնեւող երկու մոկացի հայդուկները շատ խնդրեցին, որ իրենց գաւառն էլ գնանք այցելելու, բանի որ առաջուց իրենք որդէն տեղեկացրել են ընկերներին Վերջինները սպասում են, պատրաստութիւնները տեսած։ Այդ առաջարկը նպատակայարմար գտանք և պատրաստուեցինք ուղեկուելու դէպի Մոկս Երեկոյեան դուրս գալով անտառից, գնացինք Սակու Այդտեղ տեսնեցանք բիւրդ Սլոհ հետ, բաւական զրուցեցինք. նա իր պատրաստականութիւնը յայտնեց՝ ամեն անգամ որ գալու լինինք՝ մեզ ընդունելու և աջակցելու Զորի մէջ մի քանի հայտառնակ գիւղեր կային՝ կազմի Կոռուվանք, Հինենց, Զնուկ և այլն, գնացինք կոռուվանք մօտ. կանչեցինք ընկերներից մէկին, որպէս զի մեզ առաջնորդէ Հին են ց գիւղը Հինենցի մօտ մի շատ հին և մեծ եկեղեցի կար, աւերակ գրութեան մէջ Եկեղեցու գուռը բացինք ու մտանք ներս. բոլորովին անխնամ ու անմաքուր էր հայ տաճարը. Ժամասացութիւն չէր լինում Տեղացի և գաւառացի հայդուկները մի առանձին ջերմեռանդութեամբ էին մօտենում այդ եկեղեցուն, արեխ ու գույպայ հանում էին ու բորիկ ոտքերով մտնում. և երբ մենք ոտնամաններով ներս մտանք՝ գժգոհութիւն յայտնեցին. ո՞նչպէս կարելի է արեխներով եկեղեցի մտնել. գուք պէտք է մեզ օրինակ լինէք, այնինչ հակառակն է գուրս գալիս. գուրս վիրաւորում էք սրբութիւնները և այլն... Մի կերպ կարողացանք համոզել որ մեր արածը բնաւ սրբազնութիւն չէ և որ, վերջապէս, մենք հայդուկներ ենք, պէտք է միշտ պատրաստ գտնինք թշնամու հանդէպի Տղայք հանդարտեցին։

Մեզ տարան գիւղը, մտցրին մի մեծ գոմ Առհասարակ, շատ բիշ և պատահում, որ գիւղերի մէջ հայդուկներին ընդունեն տներում, սովորաբար ընդունում են գոմերում և կամ մանաւանդ յարդանոցներում, որ աւելի պահում աշեցի անդեր են 8երեկը մացինք Հինենց,

կանչեցինք մեզ մօտ մի բանի իշխանների, նաև մի բանի գիւղացիների մօտակայ գիւղերից նոյնպէս յայտնի, ականաւոր մարդկանց եկաւ նաև քահանան և կազմակերպման համար պէտք եղած կարգադրութիւններն արին:

Երեկոյեան մեկնեցինք գէպի Մոկս Բարձրանում էինք Առնոսի գագաթը, որ այդ ժամանակ ձիւնով էր պատաժ:

Ճանապարհին մտանք մի այր և մոկացի ընկերներից մէկին զրկեցինք Մոկս՝ մեզ համար տեղ պատրաստելու: Երեկոյեան եկան մեր առաջնորդները և մենք զիմեցինք դէպի Մոկս: Ամբողջ գիշերը քայլեցինք ձորերով և առաւտեան հասանք Մոկաց քաղաքի մօտ Պետոն հիւանդացաւ, տեղացիներից մէկի հետ նրան զրկեցինք քաղաք, ինքներս մնացինք լեռու Առաւտեան պառկած ենք ձորում, մէկ էլ տեսնենք՝ երեք քիւրդ, մանգաղները ձեռներին, եկան խոտ հնձելու: Մենք կամաց-կամաց փորի վրայ սողալով վեր բարձրացանք, որպէս զի չնկատեն մեզ, բայց անիրաւները խոտը հնձելով՝ նոյնպէս շարունակ բարձրանում էին ձորն ի վեր, գէպի մեր կողմը: Մենք էլ աւելի վեր սողացինք: Այդպէս երկար առնջեցին նրանք մեզ, մինչեւ որ հասանք մի բարձր ու քարբարոտ տեղ, ուր և թագնեցինք:

Երեկոյեան մտանք Մոկաց քաղաք, ուր մեզ համար տեղ էին պատրաստած: Առնոսի հարաւային փէշը Մոկաց գաւառն է: Լեռնոտ մի երկիր, բոլորովին զուրկ անտառներից: Ազգաբնակութիւնը—հայ և քիւրդ: Գաւառի մէջ հայերը մեծամասնութիւն են կազմում: մօտարութապէս 30 զուտ հայոբնակ գիւղեր, որոնցից մի քանիսը միայն բրդախառն են և բրդագործութեան համար հողը շատ սակաւ է և բնիկները իրենց հացը Ռշտունիքից են ստանում: Մոկսը գտնելով ձորի մէջ, շրջապատւած բարձր լեռներով, բաւական տաք ու բարերեր երկիր է: Բերբերից հոչակաւոր է ու Մոկաց տանձն, նուռը, խաղողն ևս արտադրում է մեծ առատութեամբ: վերջապէս, պէտք է յիշատակել նաև ծխախոտի մշակութիւնը: Ժողովուրդը պարապում է և խաշնարածութեամբ ու մանաւանդ առետրով: Մոկսը բաղկացած է չորս գիւղերից, որոնք միասին կոչում են ու Մոկաց քաղաքն: Հոչակաւոր են Մոկաց ջրերը: Մոկս նատում էր գայմագամ 70-ի չափ զինորներով: Այդտեղ ևս կար մի ուշագրաւ տիպ, քիւրդ Մուրթուլայ բէկը, հայոսէր ու բաւական ազատամիտ գաղափարներով: Նա շատ լաւ գիտէր հայերէն: Աւետարանը ամբողջ կարդացել էր և ուսումնասիրել, գուցէ աւելի լաւ, քան մեր տէրտէրները: Աւելի բաւական մաքուր արտասանութիւնն Ամեն անգամ, ի հարկին, տեղական հայերին մեծ օգնութիւն արել է, մանաւանդ վերջին կոտորածների միջոցին: Ամբողջ գաւառի մէջ ոչ մի հայի վկաս չհասաւ, շնորհիւ գլխաւորապէս այդ բէկին Ինքը կլաղասի էր, բաւական գեռ երիտասարդ, բոլորի կողմից յարգւած: Նրա մասին մի գէպը են պատմում, որ

յոյց է տալիս նրա հայասիրութեան աստիճանը: Մի անգամ բէկը ինչ որ տեղից գալիս է իր գիւղը: Շասապարհին պատահում է մի հայ քահանայի և խօսակցելով գալիս են մէկտեղ գիւղու բէկը խօսում է մարտու հայերէն, առանց մատնելու իր օտարազգի լինելը: Ի միջի այլոց նա հարց ու փորձ է անում բրդերի մասն ինչպէս են արդեօք նրանք վարում հայերի հետ Քահանան, իրու հայ մարդու, նկարագրում է ախոր իրականութիւնը և բրդերին բիշ հայհոյում է: Այդ հասնում են գիւղ տէրտէրը և բէկը շարունակում են իրար հետ հաւասար քայլել երբ գիւղացիք նկատում են բէկին, իսկոյն ամենքն էլ ուրի են կանգնում, ողջունում նրան և միաժամանակ գաղտնի, ակնարկով հասկացնում են տէրտէրին, որ բիշ յետեւ անցնի, որովհետեւ Մուրթուլայ բէկի հետ է բայլում: Քահանան նախ զարմանում է, ապա զիսի ընկելով, երկի զից չգիտէ ինչ անէ: իսկ բէկը հանգիստ, առանց վրդովւելու, բաժանելում է նրանից ու տուն է գնում: Հետեւել օրը Մուրթուլայ բէկը մարդ է զրկում քահանայի ետևից: վերջնը սաստիկ վախենում է, կարծելով որ իրեն պատժելու է: Երբ սակայն զոնով ներս է մտնում՝ բէկը սիրաժպիտ ընդունում է հայ հոգեռուականին և հրաւիրում նստելու: ԴՄ՛ վախենայ, տէրտէր, ինչ անենք, որ դուք բրդերի մասին այնպիսի կարծիք յայտնեցիք: իրու հայ, դուք ասացիք ճշմարտութիւնը և պաշտպանեցիք ձեր ժողովուրդը: Ես դրա մէջ յանցանք շեմ տեսնում, մանաւանդ որ բրդերը իրօք անպիտան են: Ապա բահանային խրախուսում է և պատով հիւրասիրելուց յետոյ, ճանապարհ դնում:

Երկու օր մնացինք այդ գիւղում, ուր շատ լաւ ընդունելութիւն գտանք: Մեր հայդուկներից մին հէց այդ գիւղիցն էր, ինքն ամուսնացած, մի քաջ փորձառու և գաղափարական երիտասարդ: Այդ գիւղի մէջ կար մի կասկածելի մարդ, դաւաճան ճանաչւած: Պէտք էր պատժել նրան: Այդպէս էլ մտածեցինք: բայց մեր տեղացի հայդուկ ընկերը միջամտեց և առաջարկեց մեզ նրա հետ միանգամ տեսնելու ու խօսելու թերեւս կը դառնայ իր վատ ընթացքից: Մնալով Մոկաց այդ քաղաքամասում՝ մի բանի գիւղերից մարդիկ կանչեցինք ու դարձեալ հարկաւոր կարգադրութիւններն արինք կազմակերպութեան վերաբերեալ, ապա — զէպի Ուլշտունիք:

Գիշերը ճամբրուն, մէկ էլ տեսնենք՝ յիշեւալ ողաւաճանը՝ եկաւ միացաւ մեզ՝ իր եղրօր հետ միասին Այդպէս մինչեւ առաւտու զնացինք ձորերի միջով, լեռների լանջերով և հասանք Փութկու գալիին (ձոր): Հրաշալի տեսարաններ էին... Գիշերային լուսութեան մէջ մի ահազին խոռոչից գետը գուրս էր բղիսում ահեղազու և փրփրագէզ: Վեղեցիկ իր և Փութկու ձորը: Այդտեղ է Փութկու վանքը որ ներական է տեղացի թէ մահ-

մեղականների և թէ բրիտոննեաների համար Ամենքն
էլ ապաստան են գտնում այդանեղ, ամենքն էլ օգնում
են վանքին Զմեռը այդ կողմերը սոսկալի է լինում
Եղերովը մի ահաւոր բարձունք է, ուր տարւայ զրեթէ
բոլոր եղանակներին ձիւն է լինում: Բուքն ու բուքանը
անպահան են ձմրան օրերին, ճանապարհները փակւում
են, մարդիկ ապաստան են գտնում Փութկիում: Տարի
չի անցնում տուանց մարդկային զոհերի: Այդ երկու
ապաստանները, մէկը Փութկին, Եղերովի մի փէշին,
միւսը յատուկ շենք միւս փէշի վրայ—ձմրան ժամա-
նակ ունենում են յատուկ նշանակւած մարդիկ, որոնք
մեծ բանակութեամբ հաց և փայտ են ամբարում ճամ-
բորդների համար:

Մտանք ձորի մէջ մի բարանձաւ Երկու հոգի գնացին Փութեկու վանքը՝ մեզ հաց բերելու Այն ժամանակ վանքի կառավարիչը մի կին էր Նա ղրկեց մեզ ինչ որ պէտք էր. հաց, սեր, մեղք, մածուն, պանիր և լուսաշեցինք: Մեզ մօտ նստած էին կարծեցեալ դաւաճանը և իր եղբայրը. երկար խօսեցինք յետերնին, երակար բացատրեցինք մեր գործը, նպատակը, ուղղութիւնը: Մարդը խոստացաւ ամեն կերպ աջակցել մեզ. անիրաւը խելօք ու ճարպիկ մէկն էր: Կը եղայրը յետոյ մեր ֆեդայիների շարքն անցաւ և իր քաջութեամբ միշտ աչքի էր ընկնում: Խակ ինքը բաւական ժամանակ հաւատարիմ մնաց մեզ բայց երբ մեր ուժերը թուլացան այդ կողմերում՝ նա աւելի վատթարացաւ, բան առաջ: Կառավարութեան պաշտօնեայ դարձաւ և ահագին վեասներ հասուց մեզ Երեկոյեան մութը կոխելուն՝ ճանապարհ ելանք դէպի Եղերով կիդագաթը Լուսաբացին այնտեղ էինք: Մի աննման պանօրամա... Արեգակը ծագեց, օրը բիշ-բիշ տաբացաւ և մենք սկսեցինք դիտել շրջակայթը: Ծատ գաւառներ էին փուած մեր ոտքերի տակ: Երեսում էին Սիրիանը, Վանար լիճը, Մասիսը... Մեր երկարատև շրջադաշտութեան միջոցին ոչ մի տեղ այդքան ընդարձակ հօրիզոն չէինք տեսել: Եղերովի գագաթից ճանապարհը անցնում էր դէպի Արշառունիք, Աղերդ, Ծառախ և լուսական կարելի է այդտեղից ջարդել հազարաւոր բանակի:

Թաշտունիքից երկու լաւ վալադներ էինք բերել տւել
որոնք և առաջնորդեցին մեզ դեպի այդ երկիրը: Ճա-
նապարհի երկու կողմերում դուռտերցի բոչարներից
վրաններն էին շարւած: Վրանաբնակները դեռ արթուն
էին, հարկաւոր էր մի կերպ սարքել, որ չիմանային
մեր ով լինելը, իզուր կռւի չքանւէինք, Ի՞նչ անել...
Աւելի յարմար գտանք՝ ազատ կերպով անցնել, բան
դալտագողի: Մեր ճանապարհը զառիվայր էր և մի քիչ
տեղ ձիւնի հաստ շերտերով ծածկւած: Հայդուկներից
մէկին, որ քրգերէն լաւ երգել գիտէր, առաջ ձգեցինք և
մենք ետենից գնում էինք: Գիշերային մթութեան մէջ

բարձրածային երգում է նա քրդական մի յայտնի մելամաղձուտ երգ. իսկ մենք իւրաքանչիւր տան վերջում թոյ, թոյ էինք գոչում (ջա՞ն, ջա՞ն), ևրդիչ հայդուկը անընդհատ շարունակում էր իր մեղեդին և մենք ել ետևից առաջ էինք գնում. անցնում էինք ուղիղ բրդական վրանների ու հովհանների միջից Քրդերը կարծում են, թէ մենք բիւրդ ճանապարհորդներ ենք և լսելով քայլը մեղեդին, իրենք ևս գովասանական բացագունչութիւններ են անում ոթոյ, թոյԱ. և հրաւիրում են մեզ կաթ խմելու: Ընորհակալութիւն ենք յայտնում ու առաջ անցնում:

Դեռ բաւական գիշեր կար, և ա ը ե կ ա յ մօտն էինք:
Գիւղ մտնել՝ վասնգաւոր էր. վալադները մեզ առաջ-
նորդեցին դեպի մի այր: Լեռան մէջ արհեստական
սենեակներ էին փորւած. պատերը, տուատաղը, յատակը
և սենեակները մաքուր ու կոկիկ տաշւած էին: Այրը
երկյարկանի էր. ցածի երեք սրահիկներում թոնիրներ
էին փորւած՝ հաց թխելու համար, իսկ վերևի 2 սե-
նեակներում խաչքար ու վեմբար կային: Երեւում է,
որ ա զ օ թ ա տ ե զ ի և եղել, ո՞վ գիտէ ինչ ժամանակ-
ներում: Այրը պատկանում է Ա. Գրիգոր Կարեկացուն
որ իր կենդանութեան ժամանակ ճգնել է, աղօթել է
այդտեղ և կեանքի վերջին օրերն է ապրել: Ներկայումս
ժողովուրդը ուխտի է գալիս այդտեղ, աղօթք անում,
մոմեր վառում: Տեղացին կոչում են ուսարեկացու աղօ-
թատեղին: Քիչ զէնը՝ գտնում է նարեկ գիւղը, ուր
ծնւել է գրիգոր Կարեկացին:

Առջևնիս փուլած էր Ռշտունիքի գաշտը, բազմամարդ
հայ գիւղօրայբով, Վանայ լիճը իր կղզիներով ու վան-
քերով և յրողջ ցերեկը մնացինք այլի մէջ. երեկոյեան
մեզ այցի եկան մի քանի գիւղօրայբից երիտասարդներ
ու մի վարդապետ. Դարձեալ երկար խորհրդակցութիւնն
Քացատրեցինք Յեղափոխական Գործի Նպատակը, միջոց-
ները, ժողովրդեան անհրաժեշտ աջակցութեան կարիքը,
իրենց բռնելիք գիրքը, անմիջապէս անելիքը ևլու Վար-
դապետը իր կողմից յորդորեց ժողովրդեան, խրտիու
կարդաց: Բոլոր անհրաժեշտ կարդագրութիւններն անե-
լով ու կապեր հաստատելով, բաժնւեցինք: Իրենք ցրւե-
ցին դէպի գիւղերը: Միւս օր ցերեկը ժողովուրդը մեզ
համար հացի պատրաստութիւն էր տեսնել, ոչխար մոր-
թել ևլու Անգամ ուղում էին մեր ճերմակեղենը գիւղ
տանել լւանալու: Զհամաձայնեցինք տալ. մեր հագինն
էր միայն, աւելորդ չունեինք... Այդ ցերեկը մի քանի
այցելուներ էլ եկան մեզ յօտ, որոնց թւումն էր մի ծե-
րունի մահտեսի:

Աէսօրից բաւական անցել էր. Ահա մի քրդուհի և մի քիւրդ մեր գիւմացի փորրիկ ձորակի մէջ առւակի մօտ բանաստեղծօրէն նստած՝ ինչ որ խօսակցութեամբ են զբազւած: Քիչ հեռուն՝ մի քիւրդ հովիտ գիւղի ոչխարներն էր արածացնում: Նկատելով երկու սիրահարնե-

բին՝ հովհի հետաքրթութիւնը շարժւեց և ոչխարները կամաց-կամաց բշելով, եկաւ անցաւ դրանց մօտից և կանգ առաւ ուղիղ մեր այրի առջև։ Թարսի պէս՝ որ-տեղից-որտեղ խելքին փշեց բարձրանալ այրը. մենք տեսնում եինք այդ և միջոց էինք փնտրում դուրս պրծնելու, ուրիշ կերպարանք տալով խնդրին և հովհի կասկածները փարատելով։ Քաշեցինք բովի սրահը իսկ մեր հայդուկներից մէկը, որ ճարպիկ, զւարթ ու ծաղրածու տղայ էր, հիւանդ ձեւանալով, սկսեց իս' լագարի պէս սողալ քարի վրայ և ո մա՞ր էր (մայրիկ) պոռում շարունակ։ Եթէ հովհւը մտնելու լինէր՝ հայդուկներից մէկը պիտի ասէր. ո զբայրս է, հիւանդ է, ուխտի եմ բերել այստեղ, գուցէ առողջանայ։ Հովհւը բարձրացաւ թէ չէ՝ մարդու գլուխ տեսնելուն պէս՝ ցած թռաւ և վազեց գիւղը. եթէ անիրաւը մտնէր այրի մէջ, իսկոյն կարելի էր նրան բռնել, իսկ այժմ այլ ևս անհարին էր. գաշտում մարդիկ կային և երկու սիրահարներն էլ հեռու չէին մեզնից։ Հովհւը գիւղ վազելուն պէս, մենք երկիւղ կրելով հետեւանքից, ստիպւեցանք հեռանալ այրից։ Մեղ այցի գիւղացիները մէջ մեծ փոսի մէջ, իսկ մնացած իրերը մեզ հետ վերցնելով գուրս թռանք։ Վերի դաշտում հայ հնձւորներ կային. տեսնելով մեզ բոլորիս զինւած՝ մնացին շւարած։ իսկ մենք, մեզ մօտ դանւած իրերը յանձնեցինք նրանց, ասելով, որ „հայ ենք, վախենալու չէր մեզնից։“

Բարձրացանք սարը. բիշ յետոյ հաւարը հասաւ, բըրդերը զինւած դիմում էին դէպի մեզ. մեր ընկերների մի մասն արդէն լեռան գագաթն էին. հիւանդ ու էսն էլ յետ շմաց. նա յառաջնօթացների թւումն էր, նոյնպէս գագաթն էր։ Մահտեսին հանել ու գէն էր ձգել իր վարտիկը աւելի թեթև բարձրանալու համար։ Լւսառաւել՝ որ վարտիկի վրայ բրդերը կարող էին հեռուից ձանաւել նրան։ Լու մնացել էինք մի երեք հոգի, որ բարձրանում էինք ու միաժամանակ գնդակներ արձակում մեր ետքից եկողներին։ Հեռուից մի ձիաւոր սրարչաւ սրանում էր դէպի մեզ, լիբրուն ենթադրում էին, որ սպիտակ ձիաւորը մէշտունիքի տէր կուլի խան բէկի որդի իւսու ք բէկն է. Մենք յետնապահ խումբս անընդհատ կրակում էինք այդ բէկ-ձիաւորի ու զզումեամբ։ Աերշինը տեսնելով, որ այդ վիճակում չէ կարող առաջ գնալ, իջաւ ձիուց, մտու բարի տակ, իսկ ձին յանձնեց իր ծառային։ Ըսկերովս գնդակը ահազին առածում թեան վրայ գիպաւ ձին բաշող ծառային և նա գետին փուեց։ Հոգեվարքի մէջ՝ ծառան պոռում էր. ո հետ կուլի խան բէկի քէօփագն եմ (աղ քէօփագէ կուլի-խան բակէ մայ)։ Ծառաների կամ հպատակների համար պար-

ծանը ու պատիւ է ասել՝ ո այսինչ աղայի կամ բէկի շունն եմ։ Պարծենում էր և այս սպանող ծառան։ Սպիտակ ձիաւորը բարի ետեւից գնդակներ էր արձակում դէպի մեզ բայց ապարդիւն ինդրուս լեռան գագաթն էինք և այնտեղից էինք կուլում խնդրինք մտածում։ ո ափսոն և խեղճ իմ որդիքս։ Կարծում էր թէ Ել չպէտք է տեսնի նրանց։

Կուլը երկար չուեց, քանի որ մութը շուառվ վրայ հասաւ։ Երեկոյեան Մահտեսին խնդրեց, որ իրեն թողնենք երթալու իր գիւղը՝ մեզի պաշար զրկելու համրու Այդպէս էլ արինք։ Հապա մե՞նք ուր երթայինք... Աերագառնալ Արտօսեան լեռները.. Մի քանի անյարմարութիւններ կային և մանաւանդ հաց չունեինք։ Որոշեցինք գնալ գիպի վանայ լճի արևմտեան լեռները։ Անցնում էինք լճի ափով, յետոյ ճամբաներս փախեցինք ուրդիշ կողմ, որովհետեւ այդտեղ գիւղեր ու հովհւներ կային։ Կորքէն գուրքին գուրք անդամանակ լեռները։ Այս գայլ մէջ արևոտան էինք կորցրել էինք ու չգիտէինք ուր գնալ Ունը յոգնել էր, այդ պատճառով ստիպւած էինք սեղան երկար հանգստանալ Ըսկերներից երկուուր մթեան մէջ մեզ մեզնից բաժանելով, իրար կորցրինք և միայն Մոխրաբերդ գիւղի մօտ նորէն։ իրար գտանք։ Այժմ պէտք բարձրանայինք և ար մը ակ այ լեռը, ցորեկն այդտեղ մնալու Առաւոտեան լեռան գագաթն էինք, քարերի մէջ Ուշտունիքի ամբողջ սարահարթը իր բազմաթիւ գիւղերով մեր առջևն էր։ Ահա Կարեկը, նոր գեղը, Փշաւանցը, Աստանը, Արտօմեալը, ուրիշ շատ գիւղեր և Ուխրաբերդը նրեակոյեան իշանք ձորով ձառնապարհը ձեր առջև էր այստեղ էին. մի անդամ որ սայթաբես՝ ուղիղ ծովի մէջ պիտի նետուիս Ունը և Պետոն չէին գալիս, ասելով, որ առաջ երթալ անհնարին է։ Այս ու այն կողմն ենք ընկնում, ճամբար չկայ. ստիպւած էինք էլի նոյն անանցունելի բարքարուով գնալ։ Պետոն նստել է. Ինչ-քան համզում ենք, չի գալիս։ Անհնարին է և անսպատակ՝ ասում է, մանաւանդ, որ մեր խեղճ Ունը չի կարող քայլել։ Ունը էլ իր կողմից աւելացնում է։ Իմ իւէր, վալլայ չեմ կանայ իշխոյ, չեմ կանայ, էսա մրուս եօթ զիրը աւետարան, վալլայ չըմ կանայ քայլել։ Այժմեղ վէճ ծագեց մեր ու պետօի մէջ, ասում էինք ախր, որ այստեղ չենք կարող լուսացնել ինչ էլ որ լինի մի կերպ պիտի առաջ գնանք, Պետօն սաստիկ վշտացաւ մեզնից, ոխովից, շատ ստիպելուց յետոյ, վեր կացաւ ու բայլեց մեզ հետ։

Կորէն անջուր աեղերով ենք անցնում, նորէն Ունը ծարաւել է։ Հայդուկներից մէկը լճի ափին յանկարծ մի աղբիւր է գտնում և պոռում է. ուղերը, ջուր եմ գտեր։ Ամենքս վազում ենք ու ադահումեամբ թափուում աղբրի վրայ Բայց... սոսկալի ջուր էր։

Դա մի աղոստ լճակ էր, ուր ցերեկը պառկում են
ոչխարները։ Զրից գարշահոս էր բուրում Բայց էլի
կուշտ խմբինք և այն էլ՝ մի քանի անգամ։

Եւյժմ պէտք է նոր այր փնտրէինք .. բարեբախտա-
բար, սակաւ շեն նրանք Հայուստանի մէջ գտանք մի
այր լզի ափին. երեսում էին դանձակ, Ալարենց և այլ
գիւղերը Առաւտօնեան մարդ զրկեցինք այդ գիւղերից
մէկը, ծանօթներին մեզ մօտ կանչելու լիկան պաշարով
Հարցրինք՝ չե՞ն կարող արդեօք մի նաև գտնել որ մեզ
տաներ և զ թ ա մ ա ր, ալնտեղից միւս ափը հասցներ
Տղերը Խոստացան ու նաւազարին բերին մեզ մօտ Սա-
յանձն առաւ մեր ուզած տեղը տանելու: Միւս առա-
ւտը փոքրիկ առագաստանաւը մօտեցաւ ափին, բոլորս
նաև նստեցինք:

Թաղը հանդարատ էր, եղանակը պարզ ու տարբ իրիկ-
նագեմին հասանք Աղթամար Դաւավարը գնաց վակըը
և քիչ յետոյ երկու երեքը վարդապետներ մեզ յօս
եկան, ողջունեցին ու նստեցին Ար կէս ժամ խօսելուց
յետոյ, վարդապետների հետ դիմեցինք կղզիի ներսը
դէպի վանքը Ընդունելութիւնը վատ չէր վանքի մէջ
Չգեցինք մեր զէնքերը և առաջին գործերնիս եղան
գնալ ծովը լողանալու։ Ապա դարձանք վանք, վարդա-
պետները թէյ պատրաստեցին մեզ հսմար և լաւ ընթ-
րիբ տւին։ Մօտ մի ամիս էր, թէյ չէինք խմել Գիշերը
հանգիստ էինք վանքի մէջ, ծածկւած սենեակներում
և տաք անկողիններում։ Ցերեկին վարդապետները ոչխար-
մորթեցին։ Փոքր ինչ կազդուրեցինք Աղթամարում, այդ
հրաշալի լեռնային գիրը երի վրայ, այդ փառահեղ հայ-
րենական հնութիւնների մթնոլորտում։

Պետան մեղ հետ գեռ նսուզված էր: Այդքանից վերջապահ հաշուեցինք: Գնացել էր լողանալու, գնացի ես ինքը էլ, խօսեցի հետք, մէկտեղ լողացանք ու վերադարձանք հայդու կների մօտ, սկսեց սիրով ու ծիծաղելով զրուցեանց հետ Ալարդապետների հետ երկար զրոյց ունեցանք ո Գործի մասին: Ամեն կերպ աշխատում էինք ո համոզել նրանց: Արդիւնքը անբաւարար եղաւ: Այդ ժամանակ Խաչառու ը աշ ատուր և աթուր կ սկս ը կնդանի էր և ապրում էր գրսի տանը: Կա լսել էր մեր գալու մասին և լուր էր դրկել: որ իր մօտ չ'երթանք, պատրաստ կ բրերելով, որ մօտը գտնուող կառավարութեան պաշտօնեաները կարող էին կասկածել և իրեն վտանգել: Ի ամենամօտ սպասաւորը կղզի էր գտնուում և պատիւներ էր տալիս մեղ, երեկի կամողիկոսի թելադրութեամբ և իր կողմից էլ մի օսմ. ոսկի նսէրեց կազմակերպութեանը Արիարանութեան մէջ մի հատիկ օրինակելի վարդապետ չկար:

Աղթամորից լուր էինք տւել Քեօշք և Խորդում գիւղբը, որպէս զի ափին սպասեն մեզ Եւ գիշերը երբ Նաւով գնում էինք, Նկատեցինք ափի վրայ ինչ որ կայծեր, որ, ինչպէս յետոյ իմացանք, արձակւում էին

կայծքարից մերոնք էին լրակ էին ցայտեցնում, որպէս
զի ուղղակի իրենց վրայ երթայինք ։ Աւը շիտակ քշե-
ցինք կայծերի ու զութեամբ ։ Ափի տղերը հանւեցին,
մտան ծանծաղուտի մէջ ու մեզի մէկ-մէկ ափի հանե-
ցին գնացինք Քեօչք գիւղը, մի յարդանոց ևսկոյն
երիտասարդները հաւաքւեցին մեր շուրջը և — հարց ու
փորձ ։ Միւս օրը դարձեալ հաւաքւեցին յարդանոցը,
որոշ հրահանգներ ստանալու համար Հիւանդ Ռէսը
էի սկսեց իր ոյօգընէ՛քը^ւ։ Երեկոյեան գիւղացիք մեզ
համար ոչխար էին մորթել և գուրսը մի հնձած ար-
տում, ծառերի տակ սեղան էին պատրաստել ։ Ընթրե-
ցինք գիւղացիների հետ, մեր տոպրակները ինձորով
լցըն ու բարի ձանապարհ մաղթեցին։

Երեկոյեան ճանապարհ ընկանք դեպի Աւան. այդ
գիշերը չկարողացանք բաղաք իջնել. մնացինք
Քերթակ գիշում, միւս օրը գիշերով մտանք Այգես-
տան. Բաւական ժամանակ էր, որ բաժանել էինք, եկան
մեր մտերիմ ընկերները, տեսնեցինք մեր սիրելի Ազգ-
գէնի հետ, ծանօթացանք տեղական գործերի հետ
Վանում երկար մնալու կարիք չկար, պէտք էր շտապել
խումբը ճամբերու Պարսկաստան՝ զենք բերելու համար
Զարդի ուրւականը մինողութունն էր — պէտք էր բիշ-
շատ պատրաստել ժողովուրդը...

Այդեմտանի մէջ ժողովներ էին տեղի ունենում, ծրագիրներ էին կազմւում, թէ տաճիկների յարձակման ժամանակ ի՞նչ դիբը բռնելու է, ինչպէս դիմադրելու է:

Աւազքէնին մի բանի մարդկանցով զրկում ենք ուսրս-
կաստան։ Այնտեղ շտապով մի մեծ խումբ են կազմում,
որին միանում են և արմենականները, ասելով՝ “Հայրե-
նիքը վտանգի մէջ է, մեզ ևս թոյլ տւեք ձեզ ընկե-
րանալ”։ Ի հարկէ մերոնք ուրախութեամբ ընդունում
են Խումբը, բազկացած 60 հոգուց, մեծ մասը զինւած
մօսինի հրացաններով, դիմում է Վան։ Սահմանն անց-
նելուց յետոյ, երբ դիշերով պիտի գային Սարայ, ձիւ-
նախառն բուք է սկսում և տղերը կորցնում են ճա-
նապարհը վալադներից մէկն էլ ասորի՝ արբած է լի-
նում. խմբի յետնապահ մասը այնքան է ուշանում, որ
վազքէնին աչքից թողնում են մթուժեան մէջ Աւազ-
քէն, կարծելով թէ ետեից կը գան ու կը հասնին որոշ-
ւած տեղը, ինքն առաջուց գնում է մանում Սարայի
մատ պանուր մի առժի մէջ Խմելի միւս մասը լրաց է ու մ

լուսաբացին ճարահատեալ ստիպւած են լինում բարձրանալ ձիւնապատ լեռան զլուխը: Քրդերը նկատում են այդ: Հաւաքը է ընկնում, չորս կողմից շրջապատում են բրդական չորս ցեղեր, Սարայի տեղական զօրքը 60-ի չափ: Եւ սկսում է մի կատաղի և անհաւասար կոիւ: Թշնամին՝ անհամեմատ աւելի բազմաթիւ, ինչպէս միշտ Մինչեւ երեկոյ կուռում են տղերբը, մի քանի զոհեր են տալիս, բայց թշնամու կողմից աւելի զոհեր են խուսմականը, որ գանձում էր առմի մեջ՝ անսահի ասման:

Ների մէջ է լինում, որ չի կարողանում դուրս գալ իր ընկերներով բաւական էր որ երկու քայլ անէին գոմի դռնից՝ բաց դաշտում պիտի մնային և շրջապատած չորս կողմից թշնամիներով:

Մութը հասնելով՝ կոխւը դադարում է:

Տղերը իրենց դիրքերից իջնում են դաշտը և խորհում են՝ ի՞նչ անել Խմբի անդամները, համարեա բոլորը առաջարկում են Պարսկաստան վերադառնալ, կարծելով որ առաջները կարող է բռնած լինել թշնամին: Քայլ մի հայդուկ, Խ է չ օ անունով, դառնում է տղայոց և յանդիմանում: Ամի՞թե ամօթ չ է մեզ հայդուկներիս յետ դառնալ. էլ ինչո՞ւ ենք այս զէնքերը կրում, զարդի՞ համար ամօ՞թ. ժողովուրդը մօտ ապագայում կարող է կոտորւել, մենք նրա միակ պաշտպաններն ենք, թէկուզ կոտորւենք էլ—պէտք է գնանք, յառաջ գէպի երկիր... Այս ոգեսորիչ և նախատական խօսքերը ազդում են Խմբի վրայ և նա առաջ է գնում Ճանապարհին բըրդերը հետամուտ են լինում ու նորից սկսում է կոխւը.— Ընկնողը՝ ընկնում է, իսկ մնացածները մժութեան մէջ բաժանում են իրարից ու առաջ են գնում մինչև Քօղազ-Քեասան գիւղը, ապաստանում մի գոմի մէջ:

Խսկ Ազգենը, որ Սարայի մօտ գոմում էր մնացել իր ընկերներով, երեկոյեան մարդիկ բաշւելուց յետոյ, գուրս են գալիս ու շարունակում ճամբան:

Խմբից բաժանուած տղործից մի բանի հօգի, ճանապարհը կորցնելով մնում են դաշտի մէջ և ցրտից սառչում, մեռնում են. մի բանի հօգի էլ մանում են Սարայ գիւղը. միւս օրը կառավարութիւնը լսում է ու բռնում նրանց, հենց տեղն ու տեղը սպանում:

Խմբի մի մասը մտել էր Քօղազ-Քեասան: Քրդերը լսում են զրանց այդտեղ լինելը և գալիս պաշտում են գոմը. խուրձեր են թափում դռան առաջ և վառում, որպէս զի այդպիսով կարողանան գոմից գուրս հանել աղայոց: Ցղերը տեսնելով, որ ծուխը պիտի խեղդէ իրենց և չկամենալով կենդանի բռնւիլ՝ վճռում են մի յանդուզն բայլ անել, փամփուշտները դնում են հրացանների մէջ և իրար ետքից վայրկենաբար դուրս թռչում անընդհատ կրակելով հրացանները: Քրդերը շւարում են այդ անակնկալից և սկսում են աջ ու ձախ կրտկել, բայց մերոնցից ոչ ոք այդտեղ չէ ընկնում, մինչդեռ 10—12 քիւրդ է սպանուամ, որոնց մէջ յայտնի սրիկայ քիւրդ Շաւէշը և հազարապետ Ջնդին: Քրդերը թռչում են իրենց ձիերը և փախչում, որպէս զի ուրիշ աւելի ապահով գիրքեր գրաւեն: Տղերը էլ հեծնում են դրանց թողած ձիերը ու բշում գէպի Ախտատաղ:

(Կը շարունակի)

Հ Ա Մ Ա Ր Ա Կ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ԺԱՆ-ԺԱԿ ՌՈՒՍՍ

(Խնահեան 200-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

(Ժ.Լրշ)

Վ

Թարթեի և բնակնիմի կատարելազունում

Պ'նոր Էլօհիղը՝ բաւական ընդորձակ վէպ է, գրւած ծայրէ ծայր նամակների ձևով: Այդտեղ դուրս է բերւած երկու կեանք: Մէկը ընթանում է Եվլեյարիայում, Լեյման լճի ափին, միւսը՝ Պարիզում: Առաջինի մէջ Խուսան կամեցել է բնական կարգը, բնութիւնը անձնաւորել էրկրորդի մէջ հասարակական կարգը, քաղաքակրթութիւնը: Մէկը պատւաւոր է և առաքինի, համեստ և աշխատասէր, պարզունակ ու ժուժկար Միւսը արատաւոր է ու մեղք, գոռոզ ու ծոյլ, զւարծասէր ու շոայլ: Առաջինում տիրում է մի ներբին հանգստութիւն ու հաշտութիւն: Երկրորդում գրգիռ ու վրդովմունք: Մէկը առողջ է, միւսը վատասերւած...

Ակափի մէջ գուրս բերւած անձնաւորութիւններից ոմանք իրենց հոգեկան կազմով, իրենց բնաւորութեամբ մէկ կեանքի արձագանքն են. ոմանք իրենց աշխարհաշայեցըրով ու գործերով՝ արտայայտութիւնը միւս կեանքի: Այդ մարդկանց մէջ ընդհարում կայ, հօգիների ու հակումների բաղինում, որ լցնում է բովանդակ վէպը: Քայլ այդ ընդհարումը ուժիքն չէ և բռնուր, արիւնահեղ չէ և կործանարար: Նա տարածւում է խորը ու լայն, նա հոգիների մէջ անսահման վիշտ ու ախրութիւն է առաջ բերում: Բայց այնուամենայնիւ նա չի կարողանում յաղթահարել անհատներին և նրանց յախտեական, անհաշտելի թշնամիներ չի գարձնում: Բնութեան ձայնը, անշահմանդիր կամքը և ներբին բարութիւնը կարողանում են զեկովարել մարդկանց կըրքերը: Անհատը այդ ընդհարում մէջ վերանորոգւում է բարոյագէս: Պասակարգային մոլորութիւններն ու նախապաշտութիւնները վերջիվերջոյ սրբագրում են: Անոր Էլօհիզ՝ մէջ ամփոփւած է մարդու բարութական և սօցիալական վերածնութիւնը՝ ընտանիքում և առհասակ կեանքում:

Ակալը կառուցւած է սիրուին պրօրեմի վրար Մի բարոյական ու խելացի, աշխատասէր ու առողջ երիտասարդ, որ կոչւում է Սէն-Պրէ օ միրում է մի նորատի աղջկա, համեստ ու առաքինի ծիւլի ի ի ն: Կրանց սէրը բնութեան մոբուր ու անխարդան օրէնքների տեսակէտից՝ յարգելի է միանգամայն: Բնութիւնը օրհնում է այդ սէրը: Բայց հասարակութիւնը կայ, որ չի ուզում ընդունել այդ կապը և որ անիծում է, թշնամանում է նրանց: Ժիւլիի հայրը՝ Բարօն գ'էտանժ, չի կարող մռանալ իր հասարակակարգի պահանջները, չի կարող

ունահարել իր գասակարդի տրամադրութիւններն ու պէին ժիշտին չի կարող ամուսնանալ մի ուաննշան՝ երիտասարդի հետ: Այսպէս է ժամանակի հասարակական մօրալը: Մարդկանց ստեղծած կարգերը ծառանում են բնական զգացութերի դեմ և աւերում անհատների երջանկութիւնը: Կախապաշարում, կեղծիք, չարակամութիւն, բռնաբարութիւն թուլատրում է, անգամ խրախուսում այդ հասարակութեան մէջ: Անուակութիւնը յանցանը չի համարում: անմեղ սէրը համարում է: Կանայք իրաւունք ունին իրենց ամուսինների անկողինը շատերի առաջ բանալ: աղջիկը իրաւունք չունի իր սիրած երիտասարդի համար իր սիրաը բանալ: Պոռնկութիւնը հրահանգում է դիտակցօրէն թէ անգիտակցօրէն: սէրը հալուծում է և պատժում: Քաղաքակրթւած մարդը իր սալօնների մէջ, արձանների ու գեղարւեսատական նկարների միջնորդում, յամառօրէն պահել է հինաւուրց անասունը: Բնական մարդը, կանաչազարդ գալաքերի վրայ ու աստեղազարդ երկնը տակ՝ կատարելագործել է իր հոգին, ազնւացըրել է իր կրքերը և ստեղծել է մի հրաշալի ամօթիսածութիւն:

Այսպիսի ծայրայեղ հակասութիւնների մէջ է ներկայանում կետանը ժան-ժակ Ռուսօսին և այդ հակասութիւնների մէջ նրա ժիշտին և Սէն-Պրէօն իրար սիրում են երկար տարիներ, երիտասարդական անշահմնիքի ու բուռն ոգեսորութեամբ: Ըզելցարիայի գեղեցիկ բնութիւնը, կապուտաչեալ Լեմանը, փառաւոր Ալպերը սնունդ են մատակարարել այդ սիրուն և նրա արմատները երկու զգայուն հոգինների մէջ չափազանց խորթաղել:

Ռուսօսն այս սիրոյ անալիզը, նրա սրտառուչ գալարութերը և նրա ամբողջ պատմութիւնը զարմանալի պերճախօսութեամբ է ներկայացնում: Համաշխարհային գրականութեան մէջ այդ էջերը կը մնան իրրև գեղեցիկ հզօր արտայայտութիւններու:

Եթէ անգիտական գրականութիւնը տւել է մի Շէքսպիր սպիրոյ նուրբ արևեստագէտ: Եթէ գերմանականը տւել է մի Գեօթէ իրրև սիրոյ խոր երգիչ, ֆրանսականն էլ տւել է մի Ռուսօս, իրրև սիրոյ զգայուն ու պերճախօս պատմիչ:

Ժիշտին և Սէն-Պրէօն սէրը չի մարմանում երբէք, նրանը չեն կարողանում կապւել ամուսնութեամբ: Բայց չնայելով դրան՝ այդ սէրը ապրում է միշտ, ապրում է մինչև գերեզման: Հասարակութիւնը կարողացաւ նրանց ֆիդիկական միացումը արգիլել, բայց նոյն այդ հասարակութիւնը չկարողացաւ բնութիւնը յաղթահարել ժիշտին իր հօր ցանկութեամբ ամուսնանում է ազնւական վալմարի հետ, նրանից երեխաներ է ունենում, բայց նրանից հանդական միացիլ ամբողջութիւնը, այդ անխարդախ բնութիւնը, այդ նահապետական գաշտերը, այդ անարատ բարբերը խորապէս աղջում են ու մեծ հասարակութեան՝ ներկայացուցչին: Նա մոռանում է քաղաքակրթութեան կենտրոնները, մոռանում է աշխարհի շքեղութիւնը—ուր երբէք երջանկութիւն չէր զգացել—և ուժգին կապւում է այս գեղջուկ, այս հովական միջավայրին:

Նելով նրա հասցէին, մի գերագոյն հրաժեշտի խօսք ուղղելով հին օրերի բարեկամին:

Այդ առաբինի կնոջ մահւան գիմաց դուք խորապէս վրդովում էք, բայց և միւս կողմից հանգստանում էք՝ հոգու սրտապնդիչ յաղթանակը տեսնելով: Ժան-ժակ Ռուսօսն այդ վէպի մէջ մարմացըրել է իր փիլիսոփայական աշխարհահայեցըրը Այսինքն այն, որ մեր ժամանակի հասարակակարգի մէջ բնութեան զաւակները կրում են ամեն տեսակ անարդարութիւն, բայց և կարողանում են պահել իրենց գոյութեան հիմք, բնական բարութիւնը, իրենց հոգին: Այդ հոգին ընկճած է այսօր, բայց վաղը կարող է բարձրանալ և տիրել աշխարհին: Հասարակութիւնը կարող է աղարտել նրան առժամանակ, հասարակութիւնը կարող է լոեցնել նրա առժամանակ, համարակութիւնը կարող է գեցնել նրա առժնը—բայց պոկել մարդու խորբից և գէն նետել՝ այդ նա չի կարող:

Ժիշտին և Սէն-Պրէօն, հակառակ աշխարհի խստասրտութեան, սիրում էին միմեանց Մարդիկ պահանջում էին, որ պատանի հոգինները նախ բան ամուսնութիւն՝ իրար օտար մնան նրանք չենթարկեցին մարդկանց հրահանգին ներբին ձայնը բաւական էր նրանց Ժիշտի ամուսնութիւնից յետոյ նրանք՝ աշխարհի կարգով, կարող էին իրար ձաշակել: Մարդիկ բնաւ մանրակրկիտ չեն դէպի այդ հարցը: Բայց նրանց խղճմանքի ձայնը կայ, որ այդ արգելում էր նրանք լսում են այդ նուրբ, այդ շիտակ ձայնին նրանք կրում են իրենց կեանիքի դասութիւնը խաղաղութեամբ և վեհանձնութեամբ: Եթէ հոգին բարի է, տառապանքները մեղմանում են այստեղ և վշտերը յուսահատութիւն չեն պատճառում ժիշտին և Սէն-Պրէօն ներբին փորձութիւններից դուրս են գալիս յաղթանակով և բարոյապէս ամրապնդւած: Այսպէս է տեղի ունենում անհատների հոգու կատարելագործումը:

Միւս կողմից՝ Ժիշտի ամուսինը, ազնւական վալմար, որ մինչ այդ ապրել էր բուռն ու շռայլ կեանքով, որ հետեւ էր իր գասակարգի բոլոր սովորութիւններին—այս ինքնարօւ ազնւութիւնը ազնւութեան առջև կանգ է առնում յանկարծ: Երկու սիրահարների մաքուր խիղճը, նրանց բնական անմեղութիւնը, այդ անխարդախ բնութիւնը, այդ նահապետական գաշտերը, այդ անարատ բարբերը խորապէս աղջում են ու մեծ հասարակութեան՝ ներկայացուցչին: Նա մոռանում է քաղաքակրթութեան կենտրոնները, մոռանում է աշխարհի շքեղութիւնը—ուր երբէք երջանկութիւն չէր զգացել—և ուժգին կապւում է այս գեղջուկ, այս հովական միջավայրին:

Ընտանիքը նրա համար դառնում է սրբութիւն: Նա նիբուռում է նրան և ապրում է նրանով: Տեղի է ունենում արիստօկրատի վերածնունդը:

Ժան-ժակ Ռուսօսն այդ անձնաւորութեան մէջ պատկերացըրել է հասարակական կարգի վերադրձը դէպի բնական կարգ: Այդտեղ են բուժւում քաղաքակրթու-

թեան վէրբերը Մարդը գառնում է այստեղ բարի, երջանիկ ու իրապէս ազատ:

ո՞ւսոր Էլօիզը՝ մի մաքուր շունչ փչեց ֆրանսիական գրականութեան: Երկար ժամանակ մարդիկ այսքան ուժեղ ձայն չէին լսել, որ նրանց կանչեր դէպի ներքին կատարելագործութիւն: Վոլտերեան սրամութիւնն ու չոր հեգնութիւնը՝ այլ ևս որոնող հօգիներին սնունդ չէր տալիս: Որուսոի զգացմունքը, այս ծաւալուն ու մեծ զգացմունքը Ծցրեց դարը: Նրա երկի մէջ, սկզբից մինչև վերջը, մի բարոյական ոգի կար, որ ծանրօրէն իջաւ վար և նստեց տրամադրութիւնների վրայ: Ժան-Ժակ Ռուսսոն իր այդ վեպով խոր ցնցում առաջ բերեց բարբերի մէջ և յեղափոխեց նրանց: Դարի ծոյլ ու արատաւոր հասարակութեան մէջ առաքինութեան ձայնը բարձրացրեց: Վատասերւած ազնւականութեան՝ աշխատանքի և անպահոյց կենցաղի հրապոյը հաջորդեց: Ժիւլին, Սէն-Պրէսն, Վոլմարը դարձան վերածնութեան սիմբոլներ, անհատական ու ընտանեկան կատարելագործութեան կենդանի պատկերներ...

Այդ վեպով հիմնեց ֆրանսիական ուսմանտիզմը: Բնութեան բոյրը, լեռների շունչը, անտառների ձայնը, լճերի ժպիտը, դաշտերի երգը գրականութեան սիրելի տարրերը դարձան: Զգայնութիւնը, ոգևորութիւնը, անուշ կրբերը, հեացող սէրը՝ հեղինակների առանձին ուշադրութեան արժանացան: 19-րդ դարի ուսմանտիկ մեծ գրողները շատ բան ստացան ժան-Ժակ Ռուսսոի այդ յուղին գործից:

Շատօրբիան, Լամարտին, Ալֆրէդ դը Միւսէ, Վիկտօր Հիւգո և շատ ուրիշները Ռուսսոի գրական վաստակից սկզբնաւորւեցին:

Այդ վեպի մէջ է սկսւած նաև 19-րդ դարի ու էալիզմը: Տեղի նկարագրութիւն, միջավայրի հօգերանութիւն, տան, շրջապատի, բակի, դրացիի պատկերներ ու տեսարաններ՝ արտայայտւած են ուշադրութեամբ և գեղարւեստական տրամադրութեամբ: Այս ու էալիզմն է, որ ֆրանսիայում մեծ փայլ չստացաւ և որ անցաւ Անգլիա, Ռուսաստան, մեծ արւեստագէտներով զարդարելու համար:

Ռուսսոի գրական ազդեցութիւնը մեծ եղաւ նաև գերմանիայում: Այս երկրի այն նշանաւոր, փոթորկալի շրջանը—որ տեղական որոշումով կոչւում էր „Sturm und Drang”—ոգևորութեան երկու աղբիւր ուներ՝ Շեքսպիր և Ռուսսո: Եւ գէօթէի պէս մի հանճարեղ հեղինակ, իր չքնաղ ու Վերմէր՝ ին բնութեան շունչ առլու համար, Ռուսսոից ներշնչւեց...

Մարդու բարոյական կատարելագործումից և ընտանեկան վերանորոգութիւնից յետոյ՝ Ռուսսոն տնցնում է հասարակական կազմին և բազարական հիմնարկութիւններին: Այս է կազմում նրա հոչակաւոր „Contrat social“-ի նիթը:

VI

Հասարակութեան վերակազմութիւնը

Մարդս ծնւած է ազատ, և ամենուրեք շղթաների մէջ է: Այս պատմական նախադասութեամբ է սկսւում ժան-Ժակ Ռուսսոի ու Ընկերային Դաշինքը: Ի՞նչպէս տեղի ունեցաւ այդ չարաշուք փոխանցումը, ի՞նչպէս կատարեց ազատ մարդու սորկացումը—հեղինակն այդ հարցը չէ քննում: Մինչև այսօր էլ հասարակական գիտութիւնները չեն լուսաբանել այն վայրէ եւ անը, երբ նախնական ազագանգութիւնը՝ ազարտւում է և երբ սկզբն է առնում հնագանդութիւնը: Այսպանը միայն պարզ է ժընկեցի փիլիսոփայի համար, որ հասարակական սիստեմի մէջ կայ, գոյութիւն ունի այդ անհաւասարութիւնը:

Այս անհաւասարութիւնը նրա կարծիքով՝ իր աւունք չէ: Կա իր ողութիւն է միայն Մարդիկ ո՞չ իր աւունք ունին սորկացնելու և ո՞չ պարտական մէկ կարծիք է առնելու մէկ միւսը—կատարում է ուժերի յարաբերութեան հետեւանքով և ոչ իր աւունքի հիմնագանգը: Այս ժամանակ և ամեն ժամանակի կարող են՝ իրենց բնական ազատութիւնը ձեռք բերելու համար՝ կանգնել մի իրողութեան դէմ և մի նոր իրողութիւն պահանջել: Ոչ մէկ իրաւունք և ոչ մէկ պարտականութիւն չի կարող յափետենապէս պահել այն կարգը, որ հին ուժերի յարաբերութեան արդիւնք է և որ նոր ուժերի ազդեցութեամբ պէտք է վերանայ:

Այրքան ժամանակ մի ժողովուրդ հարկադրուած է հնագանդւելու և հնագանդւում է՝ լաւ է անում: Կէնց որ նա կարող է թօթափել մի լուծ և թօթափում է՝ աւելի լաւ է անում: Կշանակում է թէ՝ երբ ժողովրդին հնագանդեցնում են՝ ուժով են հնագանդեցնում և ոչ իրաւունքով: Եւ երբ ժողովուրդը հնագանդւում է՝ անկարողութեամբ է հնագանդւում և ոչ պարտականութեամբ: Կշխանաւորները և նրանց իդէօլոգները այդ իրողութիւնից եզրակացրել են պարտականութեան և իրաւունքի սիստեմը՝ Քանի որ ես քեզ տիրում եմ, քանի որ դու իմ իշխանութեան ենթակայ ես փաստօրէն՝ նշանակում է, թէ ես իր աւունք ունիմ քո կամքի վրայ և դու պարտական անութիւն ունին ունիս հետեւելու իմ կամքին:

Ժան-Ժակ Ռուսսոն մերժում է այդ տեսութիւնը և չի նոյնացնում ուժը իրաւունքի հետ: Այժմ Փիլիպիկական կարողութիւն է: Ես չեմ հասկանում, թէ ի՞նչ բարոյական կարգ կարող է նրանից սկզբնաւորել Տեղի տալ ուժին՝ նշանակում է կատարել մի ակտ անհրաժշտութեան և ոչ թէ կամքի... Մի վայրկեան ենթադրենք՝ թէ (ուժի մէջ) կայ այդ կարծեցեալ իրաւունքը: Ես ասում եմ, որ նրանից անբացատրելի խառնաշփո-

թութիւն դուրս կը գայ Որովհետեւ, եթէ ուժն է իրաւունք ծնում՝ հետևանքը փոխում է պատճառի հետ Անեն մի ուժ, որ յաղթում է առաջինին՝ յաջորդում է նրա իրաւունքին Հենց որ կարելի լինի չհազանգւել անպատճեր է ն, կարելի կը լինի նաև չհազանգւել օրինակ որպէս պատճեն է առովհետեւ ամենաուժեղն է, որ իրաւունք ունի նշանակում է թէ մարդիկ կ'աշխատեն ամենաուժեղը լինելը Արդ, ի՞նչ է այն իրաւունքը, որ կորչում է ուժի անդաւութեամբ Նթէ պէտք է հնազանգւել անկարգութեամբ կարիք չկայ հնազանգւել պարտականութեամբ և եթէ այլ ես հարկ կադրու անձ չենք հնազանգւելու, այլ ես պարտաւուր էլ չենք պարզ է, որ իրաւունք բառը ոչինչ չի աւելացնում ուժին:

Արքմեն, սոսկուկան իրողութեան վրայ հիմնելի, այս կամ այն դարի ամօթաբեր փաստը սկզբունք ընդունել այս կամ այն բռնակալի չարագործութիւնը բաւարար պատճառ համարել և մարդկանց բազմութիւնը յաւերժորէն գերութեան մէջ պահել — սա բնաւ իրաւունքի խնդիր չէ: Սա միայն ուժի հարց է: Այսպէս, Ռուսսի փիլիսոփայութեան համաձայն՝ իրաւունքը չէ բջիռում ուժից, նա իր անունդը չէ ստանում հասարակական գոյութիւն ունեցող սիստեմից և քաղաքական գոյութիւն ունեցող կարգից:

Արտեղ է ազլիւրը իրաւունքի. ուր է թաղւած նրա արմատը՝ Առանց տատանման ու առանց շփոթութեան՝ ժանաժակ Ռուսսն զիմում է իր հիմնական մաքին և յայտարարում է, որ իրաւունքը բնութեան մէջ է: Մարդիկ իրենց իրաւունքը հանում են ոչ թէ մեր հասարակարգի այս կամ այն անիրաւութիւնից, այլ բնութիւնից, որ մշտապէս ողատ է իրաւունքը գալիս է մարդ էռութիւնից իսկի:

Այսպէս է սկզբնաւորում բնական իրաւունքի հոգակաւոր թեօրիան կարեւոր և առաջնակարգը այն իրաւունքը չէ, որ գոյութիւն ունի կեանքում այս կամ այն պատճառով, այս կամ այն ուժի աղջեցութեան տակ! — Կարեւորը այն իրաւունքն է, որ գոնում է բնութեան մէջ և որի համաձայն մենք պարտական չենք այս կամ այն իշխանութիւնը ընդունելու Այդ իրաւունքի հիմն վրայ մենք կարող են տապայել այսօրւայ կարգը և իրագործել բնական ազատութիւնը Անշուշտ, դատարանները չեն կարող գուրս գալ այն օղակից, որ որոշ կազմ և որոշ իշխանութիւն պատրաստել են նրանց համար նրանք ենթակայ են գոյութիւն ունեցող իրաւունքին: Բայց կեանքը լիբը չէ դատապարաւած յաւիտենապէս այդ օղակի մէջ մնալու: Նա կարող է ամեն վայրկեան լուծել այդ օղակը, նոր իրաւունք տալ աշխարհին և նոր կարգեր իրագործել Այս պատմական աշխատանքի մէջ նա լուսաւորում, ներշնչում է բնական իրաւունքից: Եթէ լինէր բնական

իրաւունքի գիտակցութիւնը՝ մարդկութիւնը երբէք իդէալներ չեր ունենայ և յառաջադիմութիւնը դատարկ, անհմաստ բառ կը դառնար Աշխարհիս եւօլիւսինի և ուլոյիսինի մէջ շափազանց նշանակելի է այդ իրաւունքի գերը: Նա է ուղղութիւն տալիս արդարութեան գաղափարին, նա է առաջնորդում մարդկայնութեան տեսակետը Առրկական իրաւունքը, որ հին գարերում իրողութիւն էր — այսօր չկայ այլ եւս Ի՞նչ սկզբունքի հիման վրայ այդ չարաշուք հաստատութիւնը, այդ փաստը վերացաւ աշխարհից: Պատական իրաւունք առաջնորդութիւնը էր անխափան իրաւունք էր անխափան — այսօր յաղթահարւոծ է արգեն գատմութիւնը ի՞նչպէս և ի՞նչ անունով կուեց դրանց գէմ Միջազգային ընդհարումների ժամանակ, պատերազմի մէջ, մինչև վերջին թւականները ամեն տեսակ բարբարոսութիւն իրաւունք էր Այժմ առաջ է եկել մի նոր գործօն՝ մարդկայնութեան սկզբունքը (Principe de l'humanité) անւան տակ՝ որ կարգում է պատերազմի սարսափելի իրաւունքը և սանձահարւում է գժոխային ակտերը:

Ի՞նչ են նշանակում այդ փաստերը: Ի՞նչ են ապացուցանում նրանք Այն, որ գոյութիւն ունեցող իրաւունքը, իրաւագէտների ողբական իրաւունքը չէ կարող ընթացը տալ կեանքի խորունկ պահանջին: Այն, որ մարդկութեան անսպառելի իդէալի ուժով այսօրւայ ողբական իրաւունքը վաղը դառնում է ցնորը, այսօրւայ ոփաստը վաղը դառնում է անելութիւն: Եւ եթէ ողբական իրաւունքից բացի՝ մարդս չունենար ուրիշ իրաւունք՝ հասարակական կեանքը կը ներկայացնէր մի մշտնջենական ստրկութիւն: Այս ստրկութիւնից հանելու համար է արժեքաւոր ժան-ժակ Ռուսսի որնական իրաւունքը: Այստեղ պէտք է տեսնել նրա մեծագոյն ճշմարտութիւնը և պատմական գերը:

Բնական վիճակի մէջ — Ռուսսի կարծիքով — բնական իրաւունքը կատարեալ է Մարդկային ազատութիւնը այստեղ ուրիշ սահման չէ ճանաչում, բայց եթէ իր սեփական ուժը Այնտեղ մարդս ամեն բանի վրայ իրաւունք ունի հասարակական սիստեմի ոչնչացումը և բնականի վերագրածը: Ցեսանք նաև, որ նա բնական առաւելութիւնները սկզբունք ընդունելով՝ նպատակալրել էր հասարակական մարդու այդ առաւելութիւնները վերածներ Այսօրւայ մարդը չի կարող թօթափել իր վրայից բազմաթիւ դարերի ժառանգութիւնը: Նա կարող չէ նոյն ան ալ բնական մարդուն Բայց նա կարող է մօսեն ալ նրան: Այս է կենտրոնական միտքը Ռուսսի պարող գրականութեան և փիլիսոփայութեան: Հասարակութիւնը նա համարում է ան հրա ժե շտ փաստ

Եւ կարծում է, որ հասարակութիւնը կարող է նաև
օգտագործած եթէ իր մէջ բնական արդար-
ութեան շունչը մացնի Խնչպէս իրագործել հասարա-
կական կազմի մէջ բնական առաւելութիւնները Ահա-
ասիկ այն հիմնական հարցը, որ Առուսան դնում է
այսպէս.

“Գրտնել համախմբման մի ձև, որ պաշտպանի և հովանաւորի համայնական ուժերով՝ անձը և բարիքը ամեն անդամի, և որի միջոցով իւրաքանչիւրը միանալով միսին՝ ենթարկել ստայն միայն իրեն և մնայ ազատ, ինչպէս առաջ”:

Այս է նրա քաղաքական սկզբունքը, որ առաջարկում է առանց վերապահութեան և խոր համոզումով Ընկերային դաշինքը այդ հիմքերի վըայ պիտի կառուցը՝ արգասաւոր և հաստատուն լինելու համար Առանց դրան՝ հասարակութիւնը կը դառնայ ստրկութեան միջոց և անիրաւութեան վայրը Եւ այդ սկզբունքի համաձայն՝ ոմեքանից իւրաքանչիւրը գնում է հաւաքականութեան մէջ իր անձը և իր բոլոր կարողութիւնը, ընդունութեան տակ¹: Այս ընդհանուր կամքը Ռուսսօնի քաղաքական սիստեմի մէջ երևան է դաշիս, իրու միակ գերիշխանը: Նրանից բարձր ուրիշ գերիշխանութիւն նաչ ճանաչում և ամենելին օրինաւոր չէ համարում Ամեն գերիշխանութիւն ելնում է ժողովրդից² — ահա թշուր է տեղաւորած այդ հոչակաւոր տեսութիւնը, որ այնքան ընդհարումների և այնքան հերոսական պայքարների հիմք ծառայեց:

Ժան-Ժակ Ռուսասօն իր „*Contrat Social*“-ով գեղեց-
կորէն պաշտպանեց նորագոյն ռամկավարութեան այդ
հաւատամթբը և Նորա իրականացման ամենառութեղ զարկը
տևաւ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ,
մասնաւանդ Նրա երրկրորդ ու երրորդ շրջանում, ժընկցի
փիլիսոփան Ներկայանում էր Հասարակական վերածնու-
թեան հեղինակաւոր մարդարէն Քաղաքական գործիչ-
ները, Նոր Հասարակական հիմնադիրները Նրա իդէալ-
ներովն էին աննդուում այդ տիեզերական գիւղազնավէպը
կերտելիս Ժան-Ժակ Ռուսասօնի բարոյական և իրական
ազգեցութիւնը մեծ էր նաև 19-րդ դարում, յանուն
ժողովրդական գերիշխանութեան մղւած բոլոր պայքար-
ների մէջ՝ „*Contrat Social*“-ը սերունդների համար
այդ գերիշխանութեան աւետարանն է եղել.

Բաւականանալով հիմական սկզբունքների այս համառօտ ցուցադրութեամբ՝ չենք մտնում „Ընկերային դաշինք” ի մանրամասն վերը լուծեան մէջ, Ամբողջ գործը բղխում է այդ նախադրեալներից և զարգանում է նրանց վրայի Բնական իրաւունքը ու ժողովրդական գերիշխանութեան իդէալը տոն է տալիս նրա իւրաքանչիւր էջին և շոնչ է փառում բռնվանդակ շինւածքին:

Այդ աշխատանքով մոռասան ամբողջացրեց իր աշ-

Խարհահայեացքը: Անհատականութեան իդէալը — որի
ջերմ տեսաբանն էր եղել իր նախորդ երկերում —
բնաւ չէր ազաւազում ունկերային Դաշինքնի մէջը
Ըսդհակառակն. այդ անհատականութիւնը այստեղ հիմ-
նաւորում է և ապահովում ընկերական դաշն ինքնին
մի վերջնական նպատակ չէ: Կա մի միջոց և մարդու
ազատութիւնը իրական դարձնելու լուանց նրան ան-
հատականութիւն կը մնայ միայն խօսք, գեղեցիկ ու
վսեմ, բայց միշտ ենթակայ աւերումի ու բռնաբարման:
Հաւաքանութեան այն սկզբունքը, որ ներկայացնում
էր Ռուսօն՝ անհատականութեան հետ հաշու էր եւ-
պէս և նրա հաւատարիմ զօրավիրն էր Եթէ մարդու
հասարակական էակ և եթէ հասարակութիւնը ան-
հրաժեշտ ու անխուսափելի փաստ է ապա մարդկային
ազատութիւնը ընկերական դաշինքով և ընկերական
դաշնի մէջ միայն հնարաւոր է: Իրերի բնութեան հե-
տեւանըն է սա...»

Այսպէս առաջացաւ ժան-ժակ լուսաօի համարական-փիլիսոփայական սիստեմը: Եւ որքան էլ այդ սիստեմը կենտրոնախոյս կողմեր շատ ունենայ, որքան էլ այս կամ այն ճամբ անմշակ և անհիմն լինի—ընդ-շանուր պահուածուամինանիւ եռագալն էլ ու որպէս

Ապրելով 18-րդ դարի միապետական-բռնակալական կազմի մէջ՝ շարժելով Փրանսիական միջավայրի արհեստական ու հիւանդութ հասարակութեան մէջ — Որուսասօն խորին անհրաժեշտութիւն զգաց ծառանալու այդ կարգերի և այդ բարքերի դէմ: Ես այս հոգեբանական գժւարին վայրկեանի համար միանդամայն հասկանալի են այն ծայրայեղութիւններն ու միակողմանիութիւնը, որ երեւան են գալիս նրա երկերում: Վատասերւած կեանքը շտկելու բուռն և անկեղծ ցանկութեան մէջ՝ նա չափազանցեց իր եռանդը և սաստկացրեց իր նախանձախնդրութիւնը: Այս պատճառով նրա քննադատութիւնը ոհնասարակական կարգի դէմ որոշ մասերում եղու անսարդար և նրա ներբողը ըննական կարգին՝, գրեթէ միշտ, եղաւ անվերապահ: Բայց այդ չափազանցեալ նախանձախնդրութիւնը և այդ անվերապահութիւնը ծնունդ տւին այն մեծ իդէալին, որ սաւառնում է նրա գործերի վրա: և որ ցուցնում է մեզ երջանկութեան ուղին:

Միակողմանիութիւնները, ծայրայեղութիւնները անհետանում են ժամանակի ընթացքում—մնում է բունը, եռութիւնը՝ արդասաւոր և կենդանի: Դրա մէջ է պարունակում այն խոշոր ուժը, որ ներգործեց մարդկային մտքի բազմատեսակ արդիւնքների վրայի որ ցնցեց յետնորդ սերունդներին և որ սղողեց անբան երկիրներ:

Ժառ-ժակ Արուսօի ազդեցութիւնը բաղաքակրթութեան պատմութեան մէջ լայն ու խոր եղաւ ։ Աս տարածւեց գեղարւեստագէտների, մանկավարժների, փիլիսոփաների, իրաւագէտների, ընկերաբանների, բարուա-

գէտների վրայ Եւ ամեն տեղ էլ նո հրապուրեց մեծերին, հանձարներին գերմանացի կանոք, նորագոյն փիլիսոփայութեան այդ յաղթական սիւնը ամենամեծ համակրութեամբ էր խօսում նրա մասին իսկ ոռւսական աշխարհի տիտանը, Տօլստօյ, յայտարարում էր, թէ ինքը երկու տեղից է բան սովորում — Աւետարանից և Պուտսահից:

Իր ժամանակակիցների մէջ՝ Ռուսօն ամենից համարձակը եղաւ և ամենից արմատական վերանորդիչը Սոցիալական խնդիրը նա ըմբռնեց այնպէս շիտակ և այնպէս խորը, ինչպէս ոչ ոք չէր ըմբռնել 18-րդ դարի բռվանդակ տարածութեան վրայ Քաղաքական անհաւասարութեան հետ նա կապեց տնտեսական անհաւասարութիւնը և մարդկութեան ապագան այդ երկու փաստի վերացման մէջ տեսաւ նա բննադատում էր բռնակալներին, որ ստրկացնում են, բննադատում էր և հարուստներին, որ թշւառութիւն են առաջ բերում Տասնիններորդ դարի հոչակառոր ընկերաբանները, անշուշտ, սօցիալական հարցն աւելի ճիշտ դրին և նրա համար աւելի բանաւոր լուծում գտան: Բայց Ռուսօն էլ արաւ այն առաւելագոյնը, ինչ որ 1760-ական թւականների կետնը և այն ժամանակայի միջավայրը կարող էր թույլատրել:

Եւ այս առաւելաբոյնը վերջին դարի համարակական իգէալների համար եղաւ կարևոր ու նշանակալից սկզբանաբառներ:

Մեծ գաղափարները միանդամից չեն ծնուռմ: Նրանք
երկար ժամանակ պատրաստում են, շրջան են գոր-
ծում այս կամ այն մոքի, այս կամ այն սիստեմի մէջ
թուսածոն 19-րդ դարի արդ մեծ գաղափարների հեռա-
տես նախապատրաստողներից մէկը հանդիսացաւ: Նրա
գերը արդ տեսակետից ևս պատմական է...

Ժան-Ժակ Ռուսսօն իր փոթորկալի կեանքը անկեղծորէն ու մեծ սիրով մարդկութեան դատին Նւիրաբերցի Եւ այսօր մարդկութիւնը երախտագիտութեամբ է յիշում նրա անունը և յարգանք է մատուցանում նրա գործին...

Ա. ՆԻՐՎԱՆԵԱՆ

১০৪ ১০৫ ১০৬ ১০৭ ১০৮

Թիւրբիոյ և Քալկանեան միւս երկիրների ընկերվարտական կուռացքութիւնները հրատարակեցին պատերազմի տաթիւ շղածերական եռ, որ տպագուռմ ենք կոճառասարացման մասին:

ՊԱԼՔԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՓՈՔԻ ԱՎԻՈՅ

ԵՐԵՎԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ

ՀԱՆՐԱՑԻՆ ԿԱՐԵՒՔԻՆ

Զարհուրելի պատերազմը մեր դռւոներուն առջև
հսած է լոր այս տղիները լոյս տեսնեն, ան հաւանա-

բար կատարւած իրողութիւն մը պիտի ըլլար Բայց մենք,
պալքանեան երկիրներու և Անդասոր-Արևելքի — զոր
պատերազմը կը հարւածէ աւելի ուղղակի կերպով —
ընկերվարականներս, պիտի չտարւինք ազգայնամոլ հո-
սանքէն, ու ա՛լ աւելի կորովի կերպով պիտի բարձրա-
ցնենք մեր ձայնը պատերազմին դեմ, անոր դիմաց հա-
նելով խաղաղութեան և միջազգային համերաշխութեան
մեր իտէալը:

Կը բողոքենք ու կը հրաւիրենք բանորական ու գիւղիական զանգւածները ու բոլոր անկեղծ տէմօրրաթները, որպէս զի մեզի միանան, ուժգին բողոք մը բառնալու համար պատերազմին դէմ, որ ամենէն աւելի աղէտալի հետեւանքներ կը բերէ իր հետ:

Թէ՛ յաղթողները և թէ՛ յաղթւողները պիտի տեսնեն, որ դիակներու և աւերակներու կոյտերու վրայ, աւելի զօրաւոր ու աւելի ամբարտաւան երկոյթով պիտի բարձրանան միլիտարիզմը, պիւրօքրասին, բաղաքական ռէաբեխիօնը և ելեմտական շահագիտութիւնը՝ ծանր տուրքերու, ապրուսաի սղացման, շահագործման ու աշխատաւոր զոնգւածներու և թշւառութեան իրենց սովորական թափորով:

Պատերազմը արդարացնելու համար՝ պալքանեան
պետութիւններու ազգայնականները կը յիշեն անոնց
ազգային միութիւնը իրականացնելու կամ գոնէ անոնց
ազգակիցներուն համար թրբական տիրապետութեան
տակ բաղաքական ինքնօրինութիւն մը ձեռք բեմելու
անհրաժեշտութիւնը:

Անշուշտ, ընկերվարական կուսակցութիւնը չէ, որպեսի ընդդիմանայ իրաբանչիւր ազգութիւն տարրերուն քաղաքական միացման իրադործումին, Այն իրաւունքը, զոր ազգութիւնները ունին ինքնավար կեանքի մը, ուղղակի հետևանքն է քաղաքական և ընկերային հաւասարութեան, և դասակարգի, կաստայի, ցեղի ու կրօնքի բոլոր առանձնաշնորհումներուն ջնջման, զոր կը պահանջն ընկերվարականները Քայլ այս միութիւնը պիտի իրականանա՞ի, երբ Թիւրքիոյ բնակչութիւններն ու հողերը բաժնւին պալքանեան փոքր պետութիւններուն միջնեւ,

Ազգայնական փաստը պալքանեան կառավարութեան
համար պատրւակ մըն է միայն Իրենց քաջարականու-
թեան իրական շարժառութը ուրիշ բան չէ, բայց եթէ
տնտեսական և հողային տարածման այն ձգտութը, որ
կը յատկանչէ դրամատիրական արդիւնաբերութիւն
ունեցող բոլոր երկիրները Թիւրքիոյ գրացիները անոր
քով կը փնտռեն այն միւնոյն շահերը, զորս կը հետա-
պնդեն փոքր պետութիւններուն եաւ պահւըտած մեծ
տէրութիւնները. Անոնք հրապարակներ կ'ուզեն՝ տեղա-
ւորելու համար իրենց ապրանքները, իրենց գրամա-
գլուխները և պիւրօքրաթական պաշտօնեաններու այն
մեծ թիւը, որուն համար այլ ևս տեղ չկայ Մայր
Երկրին մէջ:

Բայց ի վեր հանելով պալքանեան երկիրներու ծանր պատասխանատութիւնը մօտալուս պատերազմին մէջ, ու նաև անցեալին մէջ՝ երբ կ'արգիլեին թիւրբիոյ ներքին բարեկարգութիւնը, մենք չենք ուզեր բնաւ պակսեցնել թիւրբ կառավարութիւններու պատասխանատութիւնը: Զանոնք ալ պիտի մատանշենք բաղաբակիրթ աշխարհին առջե, կայսրութեան ժողովուրդին առջե ու մասնաւորաբար իսլամ զանգւածներուն առջե, որոնց աջակցութեամբ է որ կրցած են շարունակել իրենց տիրապետութիւնը:

Ազատութեան և հաւասարութեան չգոյութիւն՝ ազգութիւններու համար, ապահովութեան ու երաշխաւորութիւններու չգոյութիւն քաղաքացիներու կեանքին, իրաւունքներուն և ինչքերուն համար, արդարութեան և լաւ կազմակերպւած ու անկողմնակալ վարչութեան մը չգոյութիւն. ահա թէ ինչ բան կարելի է մեղադրել թրբական բէժիմին Ան պահպանեց հարկային ամենածանր և ամենաճնշիչ սիսթէմ մը. խուլ մնաց խոլամ և ոչ խոլամ բանորներու և գիւղացիներուն համար բարենորոգութերու ամեն պահանջի, պաշտպանելով միայն աւատապետներն ու զինւած թափուական ցեղերը՝ գիւղերու անպաշտպան երկրագործներուն դէմի Իրենց առածի կարգ անցած անգործութեամբ, թրբական կառավարութիւնները ուրիշ բան չեր ըրած, բայց եթէ առաջ բերել ու պահպանել թշւառութիւնը, տգիտութիւնը, գողթականութիւնը ու աւազակութիւնը, խմբական շարդերը լնատուի և բումէլիի մէջ, մէկ բառով անիշխանութիւնը, որ այսօր իրը պատիրակ կը ծառայէ միջամտութիւններուն և պատերազմին համար:

Նոր ուժիմին վրայ դրւած յոյսերը թէ վերջ պիտի այս անցեալին՝ նոր բաղաքականութիւն մը սկսելով ի գերեւ ելան: Իրարու յաջորդող երիտասարդ-թիւրբ կառավարութիւնները ո՛չ միայն շարունակեցին անցեալին սխալները, այլ և թիւրբիոյ շնորհւած կարծեցեալ փարլը մանթարիզմի մը հեղինակութիւնն ու փրեսթիժը գործածեցին՝ գործադրելու համար ապազդայնացման և հարստահարութեան սիսթէմ մը, պիւրօքրաթական ծայրայեղ կեդրոնացում մը, որ կը խեղեր ազգութեանց իրաւունքները և աշխատաւոր զանգւածներու պահանջումները:

Նոր ուժիմի մարդիկը նոյնիսկ կերպով մը գերազանցեցին նախորդը՝ կառավարական սիսթէմ դարձնելով բաղաքական հակառակորդներու սիսթէմատիք սպանութիւնը:

Կ'ընդունինք որ ժողովուրդները — ու միայն ժողովուրդները — իրաւունք ունին փոխելու զիրենը ձնչող ուժիմները և անօրինելու իրենց բախտը: Պատերազմին դէմ, զոր մենք ամբողջ ուժով կը դատապարտենք՝ իբր միջոց քաղաքական ու ընկերային հարցերը լուծելու, մենք կ'առաջարկենք գիտակից ու կազմակերպւած զանգւածներու բոլոր միջացներով ներգործութիւն մը:

Ազգայնականներու արիւնութիւնը՝ որ է պատերազմով խաղալ ժողովուրդներու բախտին հետ, սակարկել անոնց իրաւունքներուն և անոնց հողերուն վրայ, մենք կը պատասխանենք շեշտելով առանց ցեղի և կրօնքի խարութեան Պալքաններու և Մերձաւոր Արևելքի բոլոր ժողովուրդներուն սերտ և ամենառամկավարական միութեան մեր իտէալը, որ արդէն հոչակւած է 1909-ին Պելքատի ընկերվարական միջազալքանեան համաժողովին մէջ:

Արևելեան Եւրոպայի ժողովուրդներուն այս գաշնակցութեանէն գուրս, իրենց համար հնարաւոր ու տեսական ազգային միութիւն չկայ, ո՛չ ալ տնտեսական ու ընկերային արագ յառաջդիմութիւն:

Արենց զարգացումը շարունակ սպառնալիքի պիտի ենթարկեի ներքին ու էակսիանի և օտար տիրապետութեան վերադարձներով:

Գալով մասնաւորապէս Օսմաննեան կայսրութեան, կը նկատենք որ իր ներքին յարաբերութիւններուն մէջ արմատական բարենորոգում մը միայն կընայ խաղաղութիւնը և նօրմալ կեանքը վերահաստատել, հեռացնել միջամտութիւններն ու պատերարազմները և հնարաւոր դարձնել Պալքաններու ռամկավարական դաշնակցութիւնը:

Կէս դարու հնութիւն ունեցող և կարձատե ռամկավարութենէ մը ժառանգ մնացած հին առաջադիմութիւնները նորոգելու փորձով չե, որ թրբական կառավարութիւնը պիտի կարենայ ազգութիւններու հարցը լուծել այլ կատարեալ հաւասարութիւն շնորհելով, որ կիրականանայ միայն այն ատեն, երբ կատարեալ ինքնորինութիւն տրի ազգութիւններուն իրենց կուլտուրական հաստատութիւններուն համար — դպրոց, եկեղեցի և լուսատութեամբ գործութեան և կուսակցութիւններու համեմատական ներկայացուցչութեամբ և լեզուներու հաւասարութեամբ:

Անկողմնակալութեան երաշխիքներ կընայ տալ միայն այնպիսի վարչութիւն մը, ուր կայսրութեան բոլոր ազգութիւնները ներկայացւած են:

Այդարային բարենորոգումը, հարկային բարենորոգումը, ընկերային օրէնսդրութիւն մը և հաւաքումի ու գործադրութիւն իրաւունքներուն երաշխաւորութիւնը միայն խոլամ և ոչ խոլամ բանւորական ու գիւղացիական զանգւածներուն կլնայ տալ այն նւազագոյն գոհացումը, որ զանոնք պիտի կապէ նոր ուժիմին:

Այս բարենորոգումները կընան անախորժ գալ թըրքական պիտրոբասիին, այսինքն իրենց առանձնաշնորհութեաններուն կապւած մէկ բանի հազար անձերու, բայց վերջին ծայր օգտակար պիտի ըլլան թիւրբ ժողովրդին, զոր ներկայ ուժիմը կը պարտաւորեցնէ միայն զինուոր ու

ոստիկան-զինւոր գառնալ ու վազել բոլոր սահմանա-
գլուխներն ու գաւառները՝ կուելու համար այն աղետ-
ներուն դէմ, զորս պիւրոքաթական անկարող օլիկարշին
կը կուտակէ այս երկրին վրար

Օսմանեան կայսրութիւնը յուզող մեծ հարցերուն
լուծումը պիտի երաշխաւորէ իսլամներու ազգային ապա-
հովութիւնը և թոյլ պիտի տայ անոնց, որ հանգստու-
թեամբ աշխատին իրենց քաղաքական, տնտեսական ու
ընկերային զարգացման

Ահա՝ այն ծրագիրը, որուն իրագործման համար կո-
չում կ'ընենք ոչ միայն Պալքաններու այլ և Միջազ-
գարին Ընկերվարական Կուսակցութեան, փրոլեթարիային
աշխցութեան

Ո՞ւնք, Պալքաններու և Մերձաւոր Արևելքի ընկեր-
վարականներս, բարձր գիտակցութիւնը ունինք այն
կրնակ դերին, որ մեզի կը վիճակի համաշխարհային
փրոլեթարիային ու մեզի հանդէպ Դէմ կանգնելով
կառավարութիւններու և ազգայնամոլ ժամուլին կողմէ
շղթայագերծւած պատերազմաէր հոսանքին, պայքարե-
լով սիալ դաստիարակութեամբ մը — ժողովուրդներու
կոիւր և դասակարգերու տիրապետութիւնը տեական
գարձնելու համար — արմատացւած ու մնուցւած զդա-
ցումներուն դէմ, մենք անվհատ կերպով պիտի կառա-
րենք միջազգային համերաշխութեան մեր պարտակա-
նութիւնը Որովհետեւ պէտք չէ աչքէ հեռացնել, որ
Պալքաններու պատերազմը իր մէջ կը կրէ անմիջական
վտանգ մը համաշխարհային խաղաղութեան համար
Ասկէ զատ, գրգռելով մեծ պետութիւններու դրամա-
տիրական ախորժակները, անոնց քաղաքական կեաներին
մէջ գերակշռութիւն տալով էմփերիալիսթ, աշխարհա-
կալութիւններու ծարաւի տարրերուն, պատերազմը ո՛չ
միայն վէճ առաջ պիտի բերէ ազգութիւններուն միջև,
այլ և գերիշընդհառն կոիւր քաղաքային պատերազմ —
դասակարգերու միջև:

Դրամատիրական կառավարութիւնները, որոնք այսօր
ջանազան երկիրներու փրոլեթարիային յաջորդական
յաղթանակներէն ցնցւած են մինչև իրենց վերջին պատ-
նէշներուն մէջ, պիտի օգտւին իրենց ներկայացող առի-
թէն՝ ժողովորդային զանգւածներու արիւնին մէջ խեղ-
դելու և ճշշէ օրէնսդրութեամբ մը անշնչացնելու հա-
մար մեր ազատագրութեան, քաղաքակրթութեան ու
մարդկային յառաջիմութեան շարժումը

Հարաթներէ ու ամիսներէ ի վեր պայքար կը մշնէ
պատերազմին դէմ, բայց մանաւանդ այս պահուսէ, որ
մենք ամենէն զօրաւոր կերպով կը բարձրացնենք մեր
բոլորի ձայնը ու կը յայտնենք մեր անդրգուելի կամքը՝
մեր ամբողջ ուժով աջակցելու համար համաշխարհային
աշխատաւորութեան պայքարին ընդդէմ պատերազմին,
միլիթարիզմին, դրամատիրական շահագործումին ու
ի նպաստ դասակարգերու և ազգութեանց ազատութեան,

հաւասարութեան և ազատագրման, ու ի նպաստ իս-
դազութեան

Անկցի՛ պատերազմը,

Կեցցէ՛ ժողովուրդներու միջազգային համերաշխու-
թիւնը

Սելամիկի ըմկերվարակամ բամորակամ
ֆէտէրասիօմ
Ռումանիոյ սուխալտէմօկրաթ կուսակ-
ցութիւն

Ս. Դ. Ճէակ. կուսակցութիւն

Հ. Յ. Դաշմակցութիւն
Պաղստիմի սուխալտէմօկրաթ բամու-
րակամ Բրէայ կուսակցութիւն,

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ժ Մ Ա Ն

Ն Ա Յ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ժ Մ Ա Ն

Դ Ա Յ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ժ Մ Ա Ն

VI

ՀԱՅՈՑ ՀԱՅՑ ԵՒ ՀԱՅԱԿԱԽԵ ՇԱՐԺԱԿԱԽԵՐԻ
XVIII ԳԱԼՈՎԱՄ ԵՒ XIX-ՐԴԻ ԱՌԱՋՐԵ ԿԱՄԱՄ

Ո Ր Ի Ս Ա Ս Ա Ն Ծ Ե Հ Ա Ց Ե Ր Ը

Ազատագրական բրիչներ զարաւոր մրափից յետյ. — Կարաբաղ և
Սինիի. — Քաշէրի բոլիք և դաւանանորեան նիդրան. — Արևելեան և
Արևմտեան նայութիւն. — Աւագրան զուգանուակ. — Ռուսասանը և մեր
պատական հակասագիր. — „Between devil and the deep sea“. —
Ցարական ծրագիրներ, խոսումներ և նախանձ. — Հայ վրացական
դաշնակցութիւն. — Ցաւսախարաբիշների աւրեգ. — Խօնօնի. — Խօնօնի նախ-
աւերին. — Դիմուլ. — Նորէն խոսումներ և ճգնակումներ. — Նորէն մանմե-
դական վրեմնագործութեան բռնկաւութեան նայերի գէմ. — Խուսաց տիրապե-
տեան նասաւումը. — Հայկական պատահների խորակուում և. —
Խուսուր և Խարազանի ենք. — Մի նինաւուց վկայութիւն. — Հայ ճաղովդրի
կացութիւն Երիսանեալ ու ժմիմի տակ. — Կրան կովի ժիշիկական
ապանուութեան ավիլուու. — 1826-28 բականներ և Հայոց ա-
խաւանի նախումը. — Ներսէ Աւագանկեցի. — Հայ օրտագներ և մաս-
սային ապասմբութիւն. — Ներսէ պատահների. — Պատէան հիա-
րագութիւն. — Պատրականների հացը. — Դաւեր ներսէ սիւ նայ եկեցու
իմենութեան գէմ. — Խուսական սիստմի յադրանակը. — Ներսէ անուրի մէջ Եւստադան ակնարկ. — Tempora non mutantur.

Մինչ արևմտեան հայութիւնը ի գէմա իր սակաւաթիւ-
մտաւոր առաջնորդների մշակում էր եռանդով — գիշա-
ւորապէս Աննետիկում — հայկական գրականութիւնն ու
լեզուն, մինչ զարաբաղցի Օրին, գիւանագիտական մի
ծանր ու հոյակապ առաքելութիւն ստանձնած, բանակ-
ցում էր Եւրոպայի ու Ռուսաստանի միահեծան պետերի
հետ կովկասեան հայութիւնը պարսից տիրապետու-
թիւնից ազատելու նպատակով, անդին, հայկական լեռ-
նաստանում, Ղարաբաղի և Սիւնիքի մէջ, պատրաստում

Եր մի հզօր, զանգւածային շարժում, որ պիտի գար սատարելու Օրիի դիւանագիտական ձեռնարկները, արեան դաշտում նւիրագործելու հայոց մեծ բարողնի և ամբողջ Հայ ժողովրդի քաղաքական տենչանքները:

Խորին հիացումով է, որ այսօր անդրադառնում ենք
ոյդ հինաւուրց կռիւների վրայ, իրաւացի հպարտու-
թեամբ է, որ արձանաւրում ենք արիութեան ու անձ-
նւիրութեան այդ յիշատակելի գործերը, որ կատարել
են, 200 տարի առաջ, մեր հերոսնախորդները Սիւ-
նեաց աշխարհի անդնդախոր ձորերի մէջ, Խաչէնի ու
Վարանդայի կուսական անտառներում:

Քանի՞ դարեր սահել էին ստրկութեան մրափի մէջ,
քըիստոնէական սրաշարժ խոնարհութեան ազօթքնե-
րով.. Սերունդները յաջորդել էին բութ, որոճող հօ-
տերի պէս, առանց նոյնիսկ գիտակցելու իրենց կրած
արհաւիրքի պատճառները, առանց բնաւ ձաշակելու
ըմբուստութեան հմայը.

Այժմ ինչպէս փոխել էր պատկերը։ Հայրենիքի մի
ընդարձակ հատւածը դարձել էր թատերաբեմ դիւցազ-
նական արշաւների, պարտիզանական անդադրում ու
արիւնահեղ կոիւների, որոնց միջից կարմրագոյն ժա-
պաւենով ձգւում էր կարիճների յաղթական շարանը—
Դաւիթ բէկ և Միխիթար սպարապետ, Բայինդուր ու
Թորոս իշխան, Տէր Աւետիք և անթիւ ժողովրդական
հերոսներ, Թիլի-Արզումաններ և Դալի Մահրասաններ,
որոնց շուրջը յօրինած ոգևորիչ առասպելները մինչև
օրս ել գեռ անցնում են բերնէ-բերան Պարաբաղի և
Սիւնիքի նահապետական ու հերոսապաշտ ժողովրդի մէջ

Անխառն չե, աւա՞զը մեր հիացմունքի ու երախտագիտութեան զգացումը հայոց պատմութեան այդ դիւցազնաշունչ դրւագների առջև... Հերոսների պայծառ ու հմայիչ շարանի հանդէպ՝ այստեղ ևս ցցւել է ներքին հազարամիջիան հիդրան, մտանիչների ու դաւաճանների օճարաբոյ լէկէօնը, որ ամեն մի բայլափոխում եկել է վիժեցնելու ազգաշէն ծրագիրներ ու ձեռնարկներ Վասակների, Մեհրուժանների նզովելի սերունդը շարունակւեց 18-րդ դարու մէջ, ի դէմ Մէլիք-Շահնազարների, Մէլիք-Մուսինների և Մէլիք-Գաւանգիւնների...

Աւ շարանը կ'երկարանայ ու կ'անցնի 19-րդ և 20-րդ
դարերի սահմաններն ևս, արտադրելով նման տիպեր
յանձին ծանօթ Մամբրէների, Աւէների ու Ազրայիների,
որոնց ասես Ճակատագիրը դիտամբ աշխարհ է բերել—
այինքներական հակադրութեան օրէնքով—որպէս զի աւելի
ևս շեշտաւծ լինի Նրանց հակամաւու ախոյեանների,
բուն ռազմիկ-հերոսների գաղափարական մեծութիւնը
և թովքը...

Այս՝ Վարդանանց պատերազմից սկսած մինչև Ղափանի ու Հալիքորի յաղթական կոփեները, մինչև նորագոյն ժամանակի դաշնակցութեան՝ ճակատամարտները — հայոց մռայլ երկնակամարի սակաւաթիւ աստ

զերը պսպղում են մի առանձին պայծառութեամբ ու
յատակութեամբ, ներկայանում են առանձնապէս հրա-
պուրիչ և պաշտելի... Դաւաճանութեան վիթխարի ստուեր-
ներն անգամ չեն կարող մթնացնել 18-րդ դարի հայ-
քաջերի արդ պլէտդը, որ իրենց փայլուն սիրագործու-
թիւններով, առնական և սրբազն վրիժառութեամբ
դարագլուխ բաց արին ստրկամիտ ու բազմատանջ ցեղի
կեանբում և որոնց հեռաւոր ու արժանաւոր ժառանգ-
ները պիտի տային—XX-րդ դարի արշալոյսին — հա-
մապատասխան արձագանքը նոյն սարերում ու ձորե-
րում, թաթարական զանգւածային պօգրօմների միջոցին...

Ըստ հիւ բնական նպաստաւոր գիրքերի և կիսանկախ, միլիքական կարգերի (աւելի ուշ՝ նաև ռուսական ու ժամանակակից յարաբերական մեղմութեան), կովկասեան հայութիւնը համեմատաբար վաղաժամ ու աջողութեամբ մարզւեց բաղաբական-մարտական անհրաժեշտութեանց դպրոցի մէջ, մինչդեռ արևմտեանը, թիւրքահպատակ հայութիւնը գրեթէ բացառապէս անձնատրւեցաւ գրչի աշխատանքին, հայրենի պատմագիտութեան ու բանասիրութեան էրկու արինակից հատածների այդ ուշագրաւ զուգահեռակը և տարբերութիւնը այսօր ևս ընդհանուր առմամբ դեռ մնում է իր ուժի մէջ, և այդ հանգամանքը ցայտուն կերպով շեշտւեց հայ ազգային շարժման նորագոյն շրջաններում։ Օսմանեան Հայաստանը, տալով հանդերձ հերոսութեան բազմաթիւ ու հոյակապ տիպարներ, գրեթէ երրեք չարտադրեց ընդհանուր, ամբողջ երկիրը կամ թէ նրա մի խոշոր հատածը ընդգրկող զանգւածային շարժում (ապստամբական կամ գիմազրական), որպիսին տեսանք կովկասեան Հայաստանի մէջ, 1903 և մանաւանդ 1905—1906 պատմական թւականներում։

* * *

Հայկական երկարատև ըմբուստացումները Կովկասի
մէջ 18-րդ դարի ընթացքում սերտ կերպով կապւած
են Ռուսաստանի ծրագրած ու արևելքան առաջնաշաղցու-
թեան՝ հետ, կապւած են այն խանդավառ և վարդա-
գոյն յօյսերի հետ, որ կովկասահայ, պարսկահայտակ
ժողովուրդը դրել էր հիւսիսի մեծ, որի իստոնեայ, ազա-
տառար անտութեանն մըսու

Մեր պատմական ճակատագրին հաճելի էր որոնել
տալ մեր փրկութեան խարիսխը քրիստոնեայ պետու-
թիւններից վատթարագոյնի դրօշի մէջ որին թէկ վի-
ճակւած էր յետագայում — որ հատուցումն այնքան
շռայլ և զօհառատ հայկական ծառայութիւնների —
ստեղծել իր հպատակ Հայոստանում համեմատաբար
թեթև, հանդուրժելի մի կացութիւն, բայց դրա հետ
և վիճակւած էր պատճառել նոյն հայութեան անասելի
աղէւներ, չնորհիւ իր յաւհիտենօրէն փարանոտ, ձգձգող
յաճախ նենդ, դաւաճան բաղաբականութեան,

Մեծագորդ խոստութերին, քաջալերող յորդորներին գրեթէ միշտ հետեւ է նահանջ և լքում... և այդ տիսուր նահանջների ընթացքում մահեդական վարիչներն ու խուժանները նետել են միշտ գաղանային վրէժինդրութեամբ իրենց քրիստոնեայ զոհերի վրայ և չարաչար պատժել են խիզախ ոգիավորին^ա, որ յանդգնում էր ոգեկորել ոռուսական տռալիսաղացութեամբ, օգնութեան կոչել իսլամատեաց ո՛՛Մօսկովը^ա... Անզուսպ խանդավառութեան բարձրացող ալիբը — հաւատակից պետութեան ողատարար^ա գրօշի հանդէպ — այնքան յաճախ տեղի է տւել անողոք հիասթափութեան և հայ ժողովրդի մատար առաջնորդները, ի տես այդ անհաշիւ ազդակործան աղէտների, երբեմն հարց են տւել իրենք իրենց. ո՞րն էր արդեօք գերադասելի — քրիստոնեայ տիրապետութեան հաստատումը, թէ^ա մահեդականի յարատեսումը...

Տերթ ակամայ, մերթ էլ ասես գիտակցարար՝ այդ քրիստոնեայ պետութեան միջամտութիւնը հասել է միշտ չափազանց ուշի երր հայ զոհը մահեդական գիշտաշիների ճիրաններում եղել է զրեթէ իսպառ արիւնաքամ; Հոգեվարդոս վիճակի մէջ... Եւ ապա, միջամտելուց ու իր ուշիմը հաստատելուց յետոյ էլ ցոյց է տւել — ինչպէս կը տեսնենք — բարասիրտ անտարբերութիւն գէպի իր հպատակ հայութեան արիւնահո վերըերը! Զկամութեան, յաճախ և բացարձակ հայտացութեան մի չափաշուր ոգի գրեթէ միշտ զեկավարել է Ոռուսաստանի վարիչներին մեր ժողովրդի ազատութեան խոնդրի հանդէպ, — մի ժողովրդի՝ որ սկզբից իսկ հրաւանքով փարել էր ոռուսական գրօշակին, որ անբաւ զոհողութիւններով աջակցել ու առաջնորդել էր Ոռուսաստանին, սրա առաջին քայլերի մէջ՝ գէպի հեռու Անդրկովկասը, գէպի անհանօթ, իսլամական Արևելքը, եղել է միշտ, զրեթէ ամբողջ երկու դար, մի տեսակ առաջապահ ոռուսական տռետրի, կուլտուրայի, բաղաբական ազդեցութեան, որ տւել է իր արիւնը, իր մատար հանճարը, իր լաւագոյն զինորական տաղանդները՝ ցարիզմի աշխարհակարութիւնը դիւրացնելու նպատակով, որ տարել է իր խաչ ու խաչքաները ոռուսական բանակի առաջ, կանգնեցրել է այդ բանակում իր ալեզարդ, հոգեոր առաջնորդներին, որ վերջապէս, փայլել է իր հու, ծայրայեղորէն լոյեալ հպատակութեան զգացութերով^վ.

Դժւար է ասել, թէ ցարիզմը բռնել է այդ գժբախտ քաղաքականութեան գիծը իր կենսական շահերից դրդւած... Ոռուսաստանի, նոյնիսկ ցարական, բռնապետական Ոռուսաստանի շահերը չէին կարող թելայի այդպիսի մի բանակ, որ պիտի սպասէր ոռուսաց զօրքի ժամանելուն՝ ապստամբութեան դիմելու համար Ըստրեց կայան գանձակի մօտ և սպասեց ոռուսներին: Պատկա-

հասաւ իր նենգութեան ու տմարդութեան գագաթնակետին՝ Լօբանօվի օրով... պատմական մի անօրինակ ձգնաժամի մէջ, երբ հայ ժողովուրդը տասնեակ հաղորդներով մորթուստում էր իր հայրենիքում... ո Հայաստանը պէտք էր ուսւներին՝ առանց հայ երի^ա, — և ղետերբուրդը հրճում էր թիւրքաց հայութեան հոգեվարի գալարութերով^ա*):

Այս նզովեալ ճակատագիր՝ որ ուրիշ ոչինչ չի թողել մեզ, բայց եթէ ընտրել ըստ անգիտական առածի, սատանայի և խորունկ ծովի միջև^ա, *between devil and the deep sea*...

1722 թւականն է: Ծվէդական պատերազմը վերջացել է Ոռուսաստանի յաղթանակով և հասել է, ուրեմն, ժամանակը, երբ Պետրոս Մեծ պիտի արշաւէ գէպի Արևելք՝ ազատելու քրիստոնեայ ժողովուրդներին: Դիմութերը կրկնեցին ցարի մօտ, հայկական պատգամաւորութեան միջոցով Դիմութեր՝ և վրացիների կողմից, որոնք նոյնպէս հեծում էին մահեդական լծի տակ:

Վերջապէս Ոռուսաստանը շարժւեց: Վայրկեանը չափազանց նպաստաւոր էր. Պարսկաստանը ձեռքից գնում էր. աւղաններ, օսմանցիներ խուժել էին բռնատիրական ախորժակներով:

Վայրենի լեզզիներն ես, կովկասեան լեռնաշղթայի արևելեան լանջերից սանձարձակ արշաւանքներ էին գործում գէպի Ծիրվանի դաշտավայրը, օգտելով Պարսկաստանի թուլութիւնից, բարբայումից: Նրանք յարձակւել էին ի միջի ալոց Ծամախի վրայ, կոտորել ամբողջ ազգաբնակութիւնը, որի մէջ և 300 ոռուս հպատակներ, գրաւել էին նրանց ահագին հարստութիւնը: Լեզգիների աւերիչ յորձանքը հասաւ մինչև Ղարաբաղ, անցաւ Ճարակող լաւայի պէս Դիզակի, Վարանդայի, Խաչէնի վրայից... Մի նոր պատուհաս հայ թշւառ ազգարնակութեան համար:

Հարկ էր շտապել՝ թէ պատժելու լեզզիներին ոռուսակամական վաճառականներին վնասելու համար և թէ ձեռք ձգելու Պարսկաստանից աւարի իր առիծարամինը: Այդ էր, որ մշում էր Պետրոսին և ոչ որևէ ողատարար^ա ու սանտիմենտալ ցնորք: Մարդասիրական գրդութերից շատ աւելի ուժեղ էր ոռուս կառավարութեան մէջ՝ Արևելքի նւաճման ու առետրի ծարաւը...

Ցարի հրահանգով կազմակերպւեց հայ՝ վրացական միացեալ միամիտները, թիւրքահայց ճգնաժամի առիթի, նոյն Լոբանօվեան Ոռուսաստանն են օգնութեան կոչում... Ունայն ազերանը՝ որ երբեք չի լսել քրիստոնեայ հովանաւորը, չի լսի և այժմ նու զիտէ իր գալու ժամանակը...

*) Այսօր գարձեալ միամիտները, թիւրքահայց ճգնաժամի առիթի, նոյն Լոբանօվեան Ոռուսաստանն են օգնութեան կոչում... Ունայն ազերանը՝ որ երբեք չի լսել քրիստոնեայ հովանաւորը, չի լսի և այժմ նու զիտէ իր գալու ժամանակը...

ունի բանակ էր, թւով աւելի քան 50,000։ Հայոց զօրբի առաջնորդն էր Դաւիթ թէ կ։ Նա գնացել էր Ղարաբաղ, զինորագրել կամտորների մի բանի տասնեակ հազարներ, նշանակել էր նրանց վրայ երկու կարող զօրապետներ՝ Մէլիք Եգան և Աւան Խաջարշի Խըլը — ընդհանուր հրամանատար։ Հայկական բանակի մէջ է Գանձասարի Եսայի կաթողիկոսը, շարժման հոգեոր պարագլուխը, Խոկ հիւսիսից ուսւաց զօրքի հետ գալիս էր մի այլ հազարդիւտ հայ հոգեորական, նոյն խորբերդցի Մինաս Վարդապետը, որ Օրիի մտերիմն էր, գործակիցը։

Խի՞նդ ու բերկրանք միացեալ բանակում Անօրինակ խանդավառութիւն ամբողջ հայ ժողովրդի մէջ Եկեղեց էր, վերջապէս, հատուցման ժամը։ Սարսափը աիրում է մահմետական աշխարհին։ Օսմանցիք զգում են փոթորիկը և շտապում են գրաւել պարսկական սահմանակից երկրները, Երևանից մինչև Հին Կախիչէան և Թաւրիզի բայց ոչինչ այլ ևս չի վախեցնում հայերին։ Խաչը գալիս էր հիւսիսից սպառազէն և աչաւոր — գալիս էր պատժելու, յետ մշելու Մահիկը։ Ցնծում են Ղարաբաղի մէլիքները։ Խորայէլ Օրին սասանում է գերեզմանի մէջ.. Կատարում էր նրա վսեմ բաղձանքը, հասնում էր նրա բանամեայ տանջալի թափառումների նպատակակետը..

Եւ յանկարծ... լուր է հասնում, թէ Պետրոսը էլ չի գալիս Նա եկեղեց էր իր զօրքերով մինչև Դերբենտ և այնտեղից վերադարձել էր Աստրախան, ուսկից՝ դէպի Ռուսաստան։ Ուսւաց զօրքը գրաւել էր Կասպից ծովի հարաւային եզրերի մի շարք գաւառներ, Գիլան, Մազանդարան, Աստրաբադ ևայն։ Առաջին անգամը լոււել էր Կովկասում ուսւական թնդանօթի ահաւոր որոտը. բայց և շուտով յետ էր Նահանջել, առանց ոտք գնելու հայկական հողի վրայ.. Աներեսակայելի վիշտ ու քումն երկու փոքրիկ ժողովուրդների դաշնակից բանակի մէջ։ Ընսահման ուրախութիւն մահմետական աշխարհում Նա տեսնում է, որ „Մօսկովի“ վասնգը լոկ պատրանք է.. Եւ բռնաւորները վերսկսում են իրենց նախճիրը կրկնակի մոլեգնութեամբ..

Հայերին ու վրացիներին մնում էր զիմել ինքնօգնութեան դաւիթ թէկը, հիասմափւած, բաշւում է Սիւնեաց աշխարհ, ամրացնում է իր գիրքերը կուի ու դիմուրութեան համար։ Կացութիւնը սոսկալի է. օսմանցիք էլ խուժել էին պարսկական հողը, հասել էին մինչև Ղարաբաղ։ Մի նոր ոսոխ, աւելի ուժեղ, բան թէ պարսից քայլքաւոր բռնակալութիւնը։

Բայց հայոց ինքնօգնութիւնը հրաշքներ գործեց։ Հայկական սպատամբութիւնը պայման միաժամանակ, 1722-ի յիշատակելի թւականին, Ղարաբաղում և Արևիքում, Ղարաբաղի մէջ, մէլիքների ղեկավարութեամբ, հայերը առժամապէս հանդիսու թողնելով պար-

սիկներին, Նիւթում են օսմանցիների գէմ ճշմարիտ բարդուղիմէսեան գիշերներ, կոտորում են մասսայօրէն, մաքրում են երկիրը նորեկ բարբարոսներից, որոնց գլուխուոր հրամանատար Սարի-Մուստաֆա փաշան հազիւ հազ ազատում է հայերի ձեռքից, փախչում է Երևան։

Խոկ Սիւնիքի կուիները դառնում են մի կատարեալ գիւցազնամարտ։ Դաւիթ թէկի և իր փայլուն սպայականութիւնները յայտնի են և մենք երկար կանգ չենք առնի նրանց վրայ Ղափանի, Հալիձորի կուիները մեր պատմութեան ամենափառահեղ և ամենայուղիչ գրւագներից են և նրանց ցնցող մանրամասները գեղեցիկ է բաֆֆին իր դաւիթ-թէկ վէպի մէջ։

Մահմետական տիրապետողների բերդերը մինը միւսից յետոյ ընկնում էին նրա ահեղ զօրութեան առջև։ Հայիձորի բերդի պաշարման ժամանակ մի բռուն քաջերով ցուեց նա օսմանցիների աւելի քան հազար զորքը *), Ղափանը, Բարգիշատար, Չաւուուրը, Գենուազը և Գողթանը բոլորին մաքրեց օսմանցիներից, իւեց նրանցից Մերիի և Օրդուրաթ քաջարները.. Յանկարծակի մահը թոյլ չտուց այդ հերոսին երկար վայելելու իր յաջմութիւնների փառքը... 1728 թւին դաւաճանի թոյնը նրան գերեզման տարաւը **)։

*) Զամշեան տալիս է շատ աւելի խոշոր թիւ — 70,000։ Ակեր պատմագիրը այսպէս է նկարագրում այդ անմոռանալի դրւագը.

„Ժողովշնչան ապա ամենայն զորք այլազգեաց, որը կային ի պատրաստի... և եղեւ թիւ ամենայնի նոցա իրը եօթ անասուն հազար արանց, ամենեցին զինու վառեալք, տմեներին զրաւորը...“

Եւ եկեալ շուրջ պատրաբեցին զփռքրիկ ամրոցն դաւաթի և կանգնեցին զնովաւ բարձր պատեղ, և ուղեցին զմնդանօթս մեծամեծս և սկսուն արձուկել զումբու, և կարգ եղեալ շուրջանակի պատերազմէին հրացանիւ և պարապարիւ զաւորու վեց... Այլ զօրը Գաւիթի սրով հարեալ զնոսաւ և զբազում միջակառը արտօրեալ ի վայր թ թափէին, և ամշափ եղեն թօթ ափեալ դիակունքն, մինչև բռուս գործել առաջին այլական գործները այսպիսի այլական այլական գործներին...“

Ի հասանել ապա ուներրորդ ժամու աւուրն և ի սպանակալ վտանգին, Աւեսիք և Ախիթ ար ձայն եռուն դաւաթի պահել առ վայր մի սակաւուր զամրոցն, և ինքեանք աճապարեալ ելին արտօրեալ ընդ գաղտնի գուռն ամրոցին, և երեք հարիւր վառեալք զինի նոցաւ և յանկարծուստ յորձակալ առիւծաբար ի վերայ առաջնոյ խմբի՝ սկսուն հարկանել զնոսա կատաղի սաստկութեամբ. յորոց խռովեալ և և խունական զնոսա անկան յերկրորդ և յերրորդ խումբն, և ազագակեցին մեծամայն, թէ հասին հայը և կոսորեն զմզու էւ նոցա յահ մեծ ըմբռնեալ ափշեցան և շփոթեցան խոսաւ կատաղի սիրեանց՝ սիր և ցան փախեան անտի դիմեցին զինի նոցա զօրըն դաւաթի, և հարին զբազումս, ընդ ամենայն երեքտասան հազար այր, և ասին հարիւր ըստասուն և ութն գրօշակս, և զայլ ամենայն աղիս նոցա և գարձան ի Հայիձոր։“

Միայէլ Զամշեան, Պատմութիւն Հայոց, էջ 795.

**) Բաֆֆի, „Խամայի մելիքութիւնները : Խնչպէս է մեռել հայազգի մեծ հրամանատարը.. Ժամանակը այնքան էլ հին չէ, բայց այդ կարեսը կէտի մէջ ևս մեր պատմագիրները տարակարծիք են։ Մինչ Սամուելին

Մօտ տառը տարւայ ընթացքում՝ սիւնեցի հայր անընդհատ պատերազմներով իրացրծ եց ստրուկ հայութեան կատարեալ աղատագրութիւնը և երկար դարերի մեր անպատիւ, ողբայի պատմութեան մէջ բաց արեց մի հերոսական, պանծալի շրջան, որին պէտք է յատկացնել „Ղա ա ն ց ի ն ե ր ի շրջան՝ անունը... Հայուստանի բացմանի դժբախտ, դերի նահանջներից մէկում իր անխոնջ ախատութեամբ, իր անվեհներ քաջութեամբ և գլխաւորը — հերոսական հայրենասիրութեամբ, Դաւիթի քէկը մի աշխափիւ: մեծ ազործ ութիւնն իստարեց, որի հեռաւոր նմանութիւնն անդամ անյայտ է հայոց պատմութեան այն արիւնաներկ էջերին, որոնք գալիս են Ռուբինեան իշխանութեան ոչնչացումից յետոյ” *):

Առևի նշանաբանը նոյնն էր, ինչ որ Ղարաբարում հանգիստ թողնել առժամապէս պարսիկներին և հարածել աւելի վասնգաւոր հակառակորդին — օսմանցի եկարուներին: Կոււելու պարտիզանական ձևն էր տիրապետում: Գաղտնի դարաններից փոքրիկ խմբերով նետւել յանկարծ թշնամու վրայ, կայծակի պէս զարնել և անհետանալ... Խնըը Դաւիթի քէկ — ոի ցեղէ սիւնեց հայկանց, այր հզօր և քաջարազուկ” — տաեց այդ ձեկի առաջին փայլուն և յաղթական օրինակը Խուշ Թափալարի գաշտավայրում, մէկէն իմէկ յարձակւելով Ղօշալու թիւրը ցեղի վրայ և բնաջինջ անելով: Կուի մեթօդն էր՝ ակն ընդ ական Մովսէսի դաժան օրէնքը յաճախ և եղել փրկութեան միջոց հալածական ժողովուրդների համար... Եւ նրա լնդարձակ կիրառումները մենք պիտի տեսնենք հայկական կուի նորագոյն շրջաններում, մասնաւորապէս նոյն կովկասեան հակամաթար արշաւների մէջ:

Յենւած զինորական իր հմայքի և ընտիր սպայակոյտի վրայ, Սիւնեց հերոսը չորս տարի շարունակ պահեց երկիրը անկախ վիճակում, ահարեկելով տեղական և ըրջակայ մահմեդական ազգաբնակութիւնը:

Ապա... նորէն շուռ եկաւ բախտի անիւը, խորտակւեց այդ գեղեցիկ շարժումը, չկարողանալով աւելի հեռուն տարածւել, չգտնելով լոյն արձագանք կովկասեան կրտրատւած, բաժան-բաժան հայութեան մէջ, պառակուելով ներսում, զարնելով անյաղթելի խոչընդոտների և ամենից առաջ՝ ներբին, հայկական դաւաճանութեան:

Դաւիթի քէկի և իր աջ բազուկ Մէլիք Փարսադանի մահից յետոյ — Հայաստանը նորէն ստրուկ էր: Ի՞նչ փոյթ սակայն, թէ այդ հերոսական դրւագն ևս մնաց ապարդիւն, առանց չօշափելի վաստակի... Բաւական է, որ նա այնքան գեղեցկացնում է, գէթ վայրկենական փայլ ու հմայք հաղորդում մի զարհուրելի պատմութեան, որ գրեթէ ծայրէ ի ծայր արցունք է, նահա-

հեղինակը վերադրում է այդ մահը հայ գաւաճանի մատուցած թոյնին, Զամշեանը հաւասառում է, որ Դաւիթի քէկ վախճանել է խաղաղ ու նօրմալ մահով... Եւ ինըն դարձ արարեալ ի Հայիձար՝ յետ աւուրց ինչ հիւանդացաւ և մեռաւ ի տան իւրում խաղաղութեամբ... Լէօն յարում է Զամշեանի հիազօթ եղին:

